

Թ. ԽՉՄԱԼԵԱՆ

Գ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԿԱՅՑԵՐ



ԳԻՆԸ 10 Կ.

Երևանի քաղաքում հրատարակված

Բ. ՏԱՐԻ

491.99-8
Խ-49

ԱՂՅՔՐՈՆՆԵՐԱՆ ԽՐԷ

Տպարան Բ. Գ. Մանուկյանի

1914

123

Թ. ԽՉՄԱԼԵԱՆ

Գ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

491.99-8

160

Խ-49

Կ Ա Յ Ժ Ե Ր

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԳԻՆԸ 40 40 Պ. 1001 / 31831

Երկրորդ տարայ դասագիրք հայ եկեղեցական-ժխական դպրոցների երկրորդ բաժնի
և
Կաթոսական դպրոցների համապատասխան դասարանների համար:

Մեր ինճնությունը, նկատելի է փոխադրած յոդամների արտասուրբանի
իմաստները վերապահում է:

Երկրորդ բարեփոխված հրատարակություն



491.542-82

Խ-49

Handwritten signatures and notes

ԱԼԷՔՍԱՆԴՐԱԳՈՒ

Արագատիպ-տպարան Յ. Գ. Սանոյանցի

1914



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

1. ԳԻՒՂԻ ԳՐԱԳԷՏԸ

Մայրը իր որդուց նամակ ստացաւ,
Կարօտած սիրտը վեր ու վայր եղաւ.
Ողբին հետու էր՝ օտար քաղաքում,
Ծառայում մի տան, գպրոցում սովրում:

Նայում է թղթին, սև սև նշաններ,
Բայց այդ գրերի միտքը չըզգիտէր:
Տղան ինչ է գրել, պէտք է իմանար,
Բայց իրանց տանը կարգացող չըկար:

Դուրս եկաւ փողոց, մի քարի նստեց,
Գիւղի տէրտէրի որդուն հանդիպեց,
Եւ նրան կանչեց.— «Տէրտէրի տղայ,
Մօտս եկ, ապրես, էս գիրը կարդա»...



2. ԵՐԿՈՒ ԵՂԲՍՅՐ



Մի գիւղում երկու եղբայր էին ապրում. նրանք որք էին: Նրանցից մէկը տասը տարեկան էր, միւսը տասներմէկ երկուսն էլ սրտանց ցանկանում էին գշել-կարգալ սովորել: Հասարակ օրերը երեխաներն անկարող էին զպրոց գնալ, որովհետեւ տանը աշխատում էին. մնում էր կիրակի օրերը սովորել: Նրանց բաղդից այդ

ձմեռ գիւղից չորս վերստ հեռու մի դպրոց բացւեց, որտեղ կիրակի օրերն էին սովորեցնում: Չմեռը սաստիկ ցուրտ էր, իսկ երեխաները հօրից մնացած մի վերարկու միայն ունէին: Երկուսը միասին չէին կարող դպրոց գնալ: Մտածեցին, մտածեցին և վերջը հնարը գտան. որոշեցին հերթով գնալ դպրոց: Մի եղբայրը փաթաթւում էր վերարկուի մէջ և դպրոց գնում, իսկ միւսը տանն էր մնում:

Մի անգամ ուսուցիչը հարցրեց փոքր եղբօրը. «Ո՞ւր է քո եղբայրը. ինչո՞ւ չէ եկել դպրոց»: Երեխան ամօթից կարմրեց և կմկմաց. «Մենք մի վերարկու ունենք և հերթով ենք հագնում: Այսօր դպրոց գալու հերթն իմն էր: Վերադառնալով տուն, ես իմ սովորածները պատմում եմ եղբօրս: Միւս կիրակին եղբայրս կը գայ դպրոց և ինձ կը պատմէ դասը»:




Նոր փարւայ նւէրք

Դերուկ պապին,
Հնէ հին փարիւն,
Գործը պրծաժ՝
Անկաւ գնաց:
Նրա ետքից
Իզաւ սարից
Հա նոր փարիւն
Նւէրն ուսին:

- Այ նոր փարի,
Գալք բարի,
Դու թեյ նւէր
Ինչ ես բերել:
Արդե՞՞օք ինչո՞ր,
Չիր ու սալոր,
Թէ՞ փանչ ու նուռ,
Չա՞միչ մի բուռ:

— Ձան մանուկներ,
Թող ձեզ մըգեր
Մայրիկը տայ.
Ինձ մօտ չըկայ:
Ես ձեզ յարմար
Մի մի համար
Գիրք եմ բերել,
Մէջը պատկեր:



Սրա նման
Ուրիշ մի բան
Էլ չեգտայ
Իբրև ընծայ:
Գիրքն է տալի
Մտքեր բարի,
Երգ, ցնծութիւն,
Խաղեր սիրուն:



4. ՆՈՐ ԴՊՐՈՑ

Լևոնը իր գրքի առաջին երեսը սովորել էր և հա-
լատացած էր, թէ ամեն բան գիտէ:

Այդ օրը նա ասաց քոյրիկին.

— Մանիկ, ես դպրոց եմ բաց անում:

— Լաւ.— ասաց Մանիկը.— դու մեզ ամենքիս կը
սովորեցնես:

— Իհարկէ:

Իսկոյն ամբողջ դպրոցը հաւաքուեց. երեք տիկնիկ-
ները, շնիկն ու Մանիկը կողք կողքի նստութեցին, իսկ
Լևոնը սկսեց.

— Առաջին դասը Ա, երկրորդը Բ, երրորդը Գ, իսկ
չորրորդը Դ... Պրծաւ գնաց: Հասկացա՞ք:

— Լևոնիկ,— ասաց քաջուելով Մանիկը, — կարծեմ
այբուբենը աւելի երկար է:

— Բան ես ասում, շատ ես հասկանում,— տաքացաւ
Լևոնը:— Ահա տես, բոլոր տառերը այս երեսին են, ես
բոլորն էլ գիտեմ:

— Ապա դու մի երեսը շուռ տուր, — ասաց վախժխելով
Մանիկը:

Լևոնը բարկացած շուռ տուեց թերթը ու սառած
մնաց: Նորից տառեր էին, անվերջ տառեր...

— Ի՞նչպէս... մի՞թէ բոլորը չեն...

Եւ Լևոնը գիրքը վայր գցեց, երկու ձեռքով երեսը
ծածկեց ու սկսեց հեկեկալով լաց լինել:

Եւ աշակերտները պէտք է ամեն կերպ մխիթարէին
իրանց խեղճ ուսուցչին:

Ով կարդայ, նա մ'արդ ա:



Դիտեցէք այս պատկերը եւ պատմեցէք բովանդակութիւնը:

6. ՄԵՐ ԲԱԿԻ ԱՌԱՒՕՏԸ

Սև աքլորը գոմի թառից
Զիլ ծուղորուղու ձայն տւաւ.
«Զարթէք, ելէք ձեր տեղերից,
Գիշերն անցաւ, լուսացաւ»:

Հաւ ու աքլոր թփթփալով
Իրանց թառից ցած իջան,
Հաւաքւեցին կռկռալով
Ու մօտեցան տան դռան:

Ահա ծառի թաւ արանքից
Ծիտիկները զարթեցին,
Ոստոստալով դէս ու դէնից
Ճկճկացին, երգեցին:

Պառաւ նանը դուռը բացեց
Զեռքին բռնած մի աման,
Հաւիկներին կուտ, ջուր տւեց,
Աղօթելով գնաց ժամ...

Ահա և մեր գիժ Սուրիկը
Շապկանց ելաւ անկողնից,
Վազեց՝ տեսնի իր շնիկը
Հօ չէ՞ փախել ամբարից...

7. ՆԱԶԼՈՒ ՏԱՏԻԿԸ

Աշնանային տխուր օրերից մէկն էր: Երկինքը առաւօտից ծածկւած էր սև ամպերով, քամին ծառերից թափւած չոր տերևները այս ու այն կողմն էր շաղ տալիս:

Նազլու տատիկը նստել էր իր տան դռան շէմքին և լալիս էր: Նրա ծնկների վրայ պառկած էր սնուկած կատուն, տատիկի անբաժան ընկերը:

Անցորդները կանգ էին առնում, նայում ու զարմանում: Նրանք չէին հասկանում, թէ ինչո՞ւ մի կատուի համար այդպէս լաց է լինում պառաւը: Գիւղի երեխաները ծիծաղում էին, իրար աչքով անում, բշխշում: Նրանց կարծիքով նազլու տատիկը ծերուլիւնից խելագարւել էր և դրա համար էլ լալիս էր:

Բայց նազլու տատիկը կատուի համար չէր լալիս:

Այդ կատուն նրա թոռնիկի—Աշխէնիկի սիրելին էր: Մեռաւ նրա աչքի լոյս Աշխէնիկը և վերջին րոպէին խնդրեց տատիկին լաւ պահպանել կատուն: Այդ կատուից էր առնում պառաւը իր թոռնիկի կարօտը: Աշխէնիկի մահից յետոյ կատուն էր նրա միակ բարեկամը:

Այժմ սատկեց այդ կատուն և նազլու տատիկը մնաց մէն-մենակ ու անմխիթար:

Ահա թէ ինչու էր լալիս նազլու տատիկը:

8. «ԶԱՐԴ ՏԱՆԵՄ»

Իմ նանը, որդիք, մի շատ լաւ կին էր,
Ժամ ու պատարագ նա շատ կը սիրէր.
Թէ արթնանալիս, թէ քուն մտնելիս՝
Ինձ համար նա միշտ աղօթքներ կանէր:

Եւ թէ պատահէր՝ հիւանդանայի,
Կրճքիս փարելով՝ միշտ կը հարցնէր՝
«Ասա՛, գաւազս, ի՞նչդ կը ցաւի,
Ասա՛, դէհ, նանը բո՞ շարը տանի»:

Ա՛խ, իմ մայրիկը, սիրուն մանուկներ,
Այնքան բարի էր, այնքան անձնուէր,
Որ վերջը, իրաւ, իմ շարը տարաւ»:



9. Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ն Ե Ր Ը

I.

Մի Թիֆլիզեցի տղայ՝ Վահան անունով՝ ամառայ ար-
ձակուրդին գնաց մօտակայ գիւղը, ուր ապրում էր իր
հօրեղբոր ընտանիքը: Հօրեղբայրն ունէր մի որդի՝ Տիգ-
րան. անունով: Վահանն ու Տիգրանը շուտով մտերմա-
ցան: Մի անգամ Վահանն ասաց Տիգրանին. — Երբ դու
մեր Թիֆլիզը գաս, ես քեզ ցոյց կը տամ երեք յարկա-
նի աներ, բարձր եկեղեցիներ, թատրոններ: Ես քեզ կը-
տանեմ մեծ-մեծ փողոցներ, ուր գիշերն էլ ցերեկայ
պէս յոյս է:

Տիգրանն ասաց. — Իսկ ես քեզ ցոյց կը տամ խիտ
անտաններ, կանաչ դաշտեր, սիրուն այգիներ:

— Բայց դու ի՞նչ կը սովորեցնես ինձ, — հարցրեց
Թիֆլիզեցի տղան:

— Ես քեզ կը սովորեցնեմ քաղհան անել արժուները,
փոցիս քաշել, ոչխար արածացնել: Բացի այդ՝ քեզ կը-
սովորեցնեմ առանց սանդուխքի մազլցել բարձր ծա-
ռերը, առանց կամուրջի անցնել առուները: Ես քեզ կը-
սովորեցնեմ եղէգնից շինել և ուրի տերևներից
զամբիւղներ գործել:

— Այդ բոլորը շատ լաւ է և կարեւոր. ես էլ քեզ կը
սովորեցնեմ գրել-կարդալը, ասաց Վահանը: Երբ դու
գրել-կարդալ սովորես և գրքեր կարդաս, այն ժամանակ
շատ բան կիմանաս:

II.

Այդ օրւանից Տիգրանը հանգիստ ու դադար չունէր:
Նա ազաչում էր իր հօրն ու մօրը, որ իրան քաղաք տա-
նեն և որևէ դպրոց տան: Տիգրանի հայրը, Մարգար
բիծան թէպէտ ունևոր մարդ չէր և անզրագէտ էր, բայց
հասկանում էր ուսման արժէքը:

Աշնանը, երբ վերջացան դաշտային աշխատանքները,

Մարգարը իր որդուն տարաւ Թիֆլիզ և դպրոց տւեց:
Տիգրանը երջանիկ էր: Նա ապրում էր Վահանենց տա-
նը և դպրոց յաճախում: Վահանն էլ օգնում էր ընկե-
րոջը, հասկացնելով նրան դասի դժւար տեղերը:

Վեր կայ

Վեր կայ, Բանուկ, խորունկ ֆնից,
Լիբեն արդէն շագուէ է

Վեր կայ փափուկ ֆռ անկողնից —
Խաւը վաղուց խօսել է:


Վեր կայ, նայիր պարու-հանից
Դէպի հեռու մեր դաշտեր..

ՍՊէն, թէ ինչպէս մեղձ գեփիւռից

Օրօրու մէն լիք հասկեր:

Դէհ, շուտ վեր կաց, էլ մի քնիր
Ծոյլ ու անհոգ՝ անկողնում.
Ա՛ռ գրքերդ, դպրոց դիմիր,
Որ բաղդ գտնես դու կեանքում:





Գիտացիայի պատկերը և պատկերը բովանդակումը

12. ԽԵԼՕՔՆ ՈՒ ՅԻՄԱՐԸ

Մի անգամ խելօքն ասաց յիմարին.

— Խելօք կաց, թէ չէ ականջիցդ կըբռնեմ ու սարէսար ման կածեմ:

Յիմարը պատասխանեց.

— Դու էլ խօսի ինձ հետ ման կըգաս:

— Այո, ասաց խելօքը:

— Ուրեմն իմացիր, որ դու էլ ինձ պէս յիմար կըլինես:

13. Մ Ո Ռ Ա Յ Ա Յ

Հինգ տարեկան Նունիկը իր հօր հետ դուրս եկաւ դրօսներու:

Ի՞նչ պայծառ էր օրը, ի՞նչպէս ծագկել էին ծառերը:

Հայր ու աղջիկ հագիւ մի քանի քայլ էին արել, որ Նունիկը մտոր մօտեցրեց ճակատին և բացականչեց.

— Վայ, մի բան մոռացայ, հայրիկ ջան:

— Ի՞նչ, հարցրեց հայրը:

Բայց աղջիկը պատասխանելու փոխարէն իր փափրիկ թաթիկը ազատեց հօր ձեռքից և փախաւ դէպի տուն:

Հայրը զարմացած նայում էր Նունիկի յետևից:

Մի երկու րոպէից յետոյ Նունիկը հեալով վերադարձաւ և փաթաթեց հօր ոտներին:

— Բայց ի՞նչ էիր մոռացել, իողեալս, հարցրեց հայրը, տեսնելով որ Նունիկի ձեռքերը դադարի են:

— Իմացիր:

— Դժուար թէ իմանամ, ձեռքիդ բան չունիս: Գուցէ գրպանդ ես դրել:

Նունիկը ծիծաղեց:

— Ոչ, ոչ, իմ մոռացածն անկարելի էր բերել:

— Ապա ինչպէս իմանամ:

— Լաւ մտածիր:

— Ուզո՞ւմ ես, ասեմ քեզ:

— Ասա՛:

— Ես մոռացայ համբուրել մայրիկին: Չէ որ միշտ,
երբ ես զբոսնելու եմ գնում, համբուրում եմ նրան:
Եւ նունիկն սկսեց զիլ-զիլ ծիծաղել:

Առւրիկը

Ինչ փարեկան Առւրիկի ֆոյրն ու
եղբայրը դարոյ էին զնայել նա թի
ֆանի զիրի վերջեց սեղանից և դուրս
եկաւ փանից:

— Աւր ես զնու՞մ Առւրիկ, հարցրեց
նրա մայր մարբան:

— Դարոյ ե՞մ զնու՞մ, մայրիկ, թեր Առ-
ֆիկի և Գուրգէնի հետ սովորելու:



15. Մ Ա Յ Ր Ի Կ Ը

Ո՞վ է ձեզ արթուն
Թէ քնած պահուն
Սիրում, փայփայում,
Չեր մասին հոգում:
— Մայրիկը սիրուն:

Յոգնած ու անքուն
էն ո՞վ է նստում
Միշտ ճօճի մօտին,
Օրորում բալին:
— Մայրիկը անգին:

Գիշերն անքուն
էն ո՞վ է լալի,
Տխուր վայ տալի:
— Մայրիկը բարի:

էն ո՞վ է երգում,
Հեքիաթներ ասում,
Տալիս խաղալիք,
Մրգեր անուշիկ:
— Մայրիկը քաղցրիկ:

Իսկ եթէ ծոյլ էք,
Սիրուն երեխէք,
Անհանգիստ ու շար,
Չէք տալի դադար,
Յերեկը թարուն,


16. ՇՈՒՆՆ ՈՒ ԿՍՏՈՒՆ

— Միա-նը, միա-նը, ինչ պիտի անեմ ես, — յուսահատ
ճիչ էր արձակում մի խեղճ սիրուն փիսիկ, մայթի
եզերքին կանգնած:



Ուզում էր անցնել փողոցի միւս կողմը, բայց չուրը
ախպէս մեծացել էր, որ մի մեծ առու էր դարձել և
խեղճ փիսիկն անկարող էր վրայից թռչել: Սաստիկ

անձրև էր գալիս և նա շտապում էր շնու, շնու իրանց տաք տունը հասնել:



Միա-նու, միա-նու... Բայց նրա ձայնը բոլորովին աննկատելի էր մընում դէս ու դէն շտապող մարդկանց համար: Փողոցի աղմուկն ու իրարանցումը վախեցնում էին փխսիկին: Ի՞նչ պէս է լինելու սրա վերջը. ինչպէ՞ս ազատւի:

Փողոցի վերևի կողմից անց էր կենում մի մեծ շուն: Նրա սուր աչքերն իսկոյն տեսան փխսիկին: Շունն արագ մօտեցաւ կատուին, բարձրացրեց նրան

իր մեծ բերանով, թուաւ շրի վրայից և հասցրեց նրան փողոցի միւս կողմը: Նա լիզեց փխսիկի դնչիկը, շարժեց պոչը ու գնաց իր գործին:

Ի՞նչ բարի և խելացի շուն է, այնպէս չէ:

17. Կ Ա Տ Ո Ի

Փխսիկ, փխսիկ, դու չար փոքրիկ, Շատ սիրուն ես, խորամանկ ես, Մետաքսապատ թաթեր ունես, Սուր եղունգով մատներ ունես:


Ականջներդ շուտ են լսում,
Մեծ աչքերդ մթնում փայլում,
Երկար բեխերդ ոլորած,
Խեղճ մկներին մահ ես նիւթում:
Քո ընկերիդ երբ տեսնում ես,
Պոչդ այս ու այն կողմն ես շարժում,
Մէջքդ ծալում, կռացնում,
Աչքերդ փակ մոռացնում.
Բայց թէ յանկարծ մի խեղճ մկնիկ
Մի անկիւնից զուրս է ընկնում,
Քո պողպատէ թաթիկներով
Գլխին խփում ես, սպանում:

Կատուի խաղը մկան մահ է:

1002
8698

18. ՈՐՍՈՐԴՆ ՈՒ ԿԱՔԱՒԸ

Մի անգամ կաքաւը պատահեց որսորդին:
- Սիրելի որսորդ, ասաց նա. — Աստուած սիրես, ձա-



գուկներիս չըսպանես. նրանք այս սարերի ամենագեղեցիկ թռչուններն են:

Շատ բարի, — պատասխանեց որսորդը. — եթէ այդ սիրուն ձագերդ պատահեն ինձ, ես նրանց կըխնայեմ, ձեռք չեմ տալ:

Կաքաւը հանգիստ սրտով թուաւ-գնաց իր գործին:

Բայց երեկոյեան տուն վերադառնալիս՝ ինչ տեսնի
խեղճը: Որսորդը մախախի մէջ դրած տանում է իր
փոքրիկ կաքաւներին, իր սիրասուն ձագուկներին:

— Ա՛խ, անխիղճ որսորդ, — մորմոքած սրտով ասաց
մայրը — չէ՞ որ դու խոստացար խնայել ձագուկներին,
ինչո՞ւ խօսքդ չըպահեցիր, ինչո՞ւ սպանեցիր նրանց. ամօթ
քեզ, ստախօս մարդ:

— Բայց չէ որ դու ինձ ասացիր, թէ բո. ձագուկ-
ներդ ամենագեղեցիկն են, այն ինչ ես սպանել եմ այս
մոխրագոյն թռչնակներին: Դու ինքդ էլ կըվկայես, որ
սրանք գեղեցիկ թռչուններ չեն:

— Ա՛խ, — բացականչեց թշուառ մայրը, — միթէ դու
չըգիտես, որ մօր համար ամենասիրունն ու դուրեկանը
իր հարսզատ գաւակն է:

19. ԿԱՔԱՒԻ ԵՐԳԸ

Արեւ բացւեց թուխ ամպերէն,
կախաւ թուաւ կանաչ սարէն,
կանաչ սարէն՝ սարի ծերէն,
Բարեւ բերաւ Ժաղիկներէն.
Արբուներկ, սիրուներկ,
Նաշխուն կախաւիկ:

Քո բուն հիւսած Ժաղիկներով —
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո րեղ լցւած ցօղ ու շաղով,
Քնետ կեչնետ արգ ու րաղով,
Արբուներկ, սիրուներկ,
Նաշխուն կախաւիկ:

20. ՎԱՅՐԻ ԱՅԾ

Անտառում, որսի ժամանակ, ես նկատեցի մի վայրի
այծ: Գեղեցիկ կենդանին կանգնել էր անշարժ և գլուխը
կախ գցած: Նրա առաջը պռկած էր իր ուլիկը:

Իմ մօտենալուն պէս այծը ցնցւեց և անյայտացաւ
խիտ անտառում, իսկ փոքրիկ ուլիկը մնաց իր տեղում:
Նրա ոտը կոտրւած էր:

Ես գրկեցի նրան և տանում էի տուն: Ուլիկը դող-
դողում էր և ուզում էր ձեռքիցս պրծնել: Նրա գեղե-
ցիկ սև աչիկները վախ էին արտայայտում:

Մի քիչ գնալուց յետոյ՝ ես մի խշխշոց լսեցի: Յետ
նայեցի, տեսայ, որ մայրը գալիս է իմ յետևից:

— Ինչ փառաւոր տապակացու է՝ ծիծաղելով ասաց
իմ ընկերը. որ ինձ սպասում էր ճանապարհին:

Ինչ լաւ էր, որ այծը չըկարողացաւ հասկանալ այդ
չար ու անտեղի կատակը:



21. Մ Ա Ս Տ Ա Ն Ը



Կրտի-կրտի Մաստանը,
 Կտիկը մտաւ բոստանը,
 Ոտով մարզը տրորեց,
 Գլխով հողը փորփորեց.
 Ծուլի-ծուլի վեր ելաւ,
 Իր պոչի հետ խաղ արաւ.
 Բոստանչին էլ դուրս թռաւ,
 Չար այծիկին ձեռք առաւ.
 Տւեց, տւեց, տուր-տւեց,
 Չանը վրէն քրքրրեց.
 Քամուն տւեց մագերը,
 Տեղից հանեց պոզերը,
 Հանած պոզերի տեղը
 Լցրեց աղ ու տաքտեղը.
 Քոլիկ դարձաւ Մաստանը,
 Էլ չէր մտնում բոստանը:

22. ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՉՈՒՆ

Աշնանը օրէցօր թռչունները պակասում են: Սոված
 թռչունների երամները առաւօտից մինչև երեկոյ դէս ու
 դէն են թռչկոտում և ուտե-
 լիք որոնում: Նրանք տխուր
 են: Ամենքն էլ սովից կրկո-
 տորւէին, եթէ մնային իրանց
 տեղերում: Բայց չըսպասելով
 այդ ընթացին, նրանք հեռանում
 են մեզանից և չւում տաք եր-
 կրներ: Հեռաւոր երկրներում

նրանք գտնում են և առատ կերակուր, և տաք բուն,
 բայց չեն մոռանում հին տեղերը: Փարնան բացելուն պէս
 նրանք շարան-շարան վերադառնում են մեր կողմերը.
 գտնում, կարկատում են քանդած բները և նորից
 կեանք սկսում:



23. Ա Շ ՈՒ Ն

Դաշտ ու այգի գեղին հագած,
 Տերևները ցիր ու ցան.
 Թռչունները երամ կապած
 Մեր աշխարհից հեռացան:

Օրը մռայլ, ցուրտ ու տխուր,
 Բարակ անձրև է մաղում.
 Մէզն է պատել սար ու բլուր,
 Էլ մարդ չըկայ դաշտերում:



Չար ագռաւը ծառի վրից
 Չմռան երգն է կոկոում,
 Մարդ, անասուն տուն ու բնից
 Ծերուկ հիւրին սպասում:




Երկու շագուկ

Երկու փոփրիկ շագուկներ մի ծղղկ-
նուր գրանի հասկը վրան: Խաւ-
կուծը շար հասրիկներ կային: Զն-
կեր շագուկները չէ կարողացան
հաշտու թեամբ բաժանել իրանց
մէջ հասրիկները: Գործը կուրի հա-
սաւ: Զագուկները կրուցներով
բռնեցին ծղնուրի ժայրերից և սկը-
սեցին փաշել, ամեն մէկը դէպի իր
կողմը: Ծղնուրը կրուցեց և շագուկ-
ները վայր բաժնեցին:

Գող ագուսւր վրայ հասաւ,
հասկը ծանկեց ու թռաւ:



25. ՊՈՒՏՈՒԿԸ



«Տակս ոսկի է», մի օր փրւած
Հպարտ-հպարտ պուտուկն ասաց.

Շերեփը թէ՛

—Սուս, ամօթ է.

Մի պարծենար գոնէ ինձ մօտ,
Հաստափորիկ կաւէ անօթ.

Ո՞րտեղից եմ գալիս բա ես.

Տակդ կաւ է, թէկուզ ճարես:

26. ԼՈՐՆ ՈՒ ՉՍԳՈՒԿՆԵՐԸ

Գիւղացիք ամառը արտն էին հնձում: Այդ նոյն
արտում, մի թփի տակ լորն իր բունն էր շինել:

Լորը տեսնելով, որ իր բնի շուրջը, ամեն տեղ հնձւած
է, ասում է ձագուկնե-
րին. «Նրեխաներ, փոր-
ձանք է պատահել: Լուռ
կացէք ու տեղերիցդ չը-
շարժէք, երեկոյեան ես
ձեզ ուրիշ տեղ կը փո-
խադրեմ»:

Զագերը չըհաւատա-
ցին մօր խօսքերին: Նը-
րանք ուրախ էին, որ
դաշտն այնպէս բացւել
էր և ասում են իրար.

«Մեր մայրը ծերացել է և չի ուզում, որ մենք ուրա-
խանանք»:



Այսպէս մտածելով, նրանք սկսեցին սուլել ու ծը-
ծալ:

Ճաշի ժամանակ գիւղացի երեխաները ճաշ
բերին հընձւորներին: Նրանք լսեցին ձագերի ծւձւոցը և
ամենքին էլ որսացին:

27. ԼՈՐՆ ՈՒ ԹՌՉՆՈՐՍԸ

Աշնան դէմ դուրսը
Ճարպիկ թռչնորսը
Թակարդ էր դնում,
Որ թռչուն որսայ:
«էդ ի՞նչ ես անում,
Վարպետ, ինձ ասա»,
Հետաքրքիր լորը՝
Ջանն առած քորը,
Իուրս գալով բարդից՝
Հարցրեց էն մարդից:
- Ի՞նչ եմ անում...
Աչքերդ բոլոս են...
Քաղաք եմ շինում,

Որ թռչունները
Ցրտից չըմբեն:
Քաղաք... հը... այ գնիթ,
Երանի հոգուդ.
Գամ՝ նայեմ մի քիչ...
Գրւեմ բնակիչ:
Լորր ոտ-ոտ յառաջեց,
Թակարդն ընկա՛ հառաչեց:
«Այ գլխիդ չոքի
Շէնքդ անհողի.
Շինում ես ծուղակ,
Անւանում քաղաք»:

28. Կ Ա Պ Ի Կ Ն Ե Ր

Մի անգամ որսորդն անտառում պատահեց մի
խումբ կապիկների: Նա այդ կապիկներից մէկին սպանեց
և քաշ տւեց իր վրանը: Միւս կապիկները վախեցան ու
փախան:


Որսորդը հանգիստ նստած էր վրանում: Քիչ յետոյ
նա նկատեց, որ վրանի շուրջը հաւաքւել են միւս կա-
պիկները: Նրանց քաջ առաջնորդը մօտենում է վրա-
նին և այնպէս է նայում որսորդին, որ կարծես ու-

ղում է ասել. «Տւէք
ինձ իմ ընկերոջ զի-
ակը»:

Որսորդը հասկա-
ցաւ կապիկների միտ-
քը: Նա նշան արեց
առաջնորդին, որ մտնի
վրանը:

Քաջ առաջնորդն
խտոյն մտաւ վրանը,
շալակեց սպանւած
ընկերոջ զիակը և
դուրս թռաւ:

Միւս կապիկները
հետևեցին առաջնոր-
դին:



29. Կ Ա Պ Ի Կ Ն Ն Ե Ր

Ծերացել էր կապիկը,
Լաւ չէր տեսնում պապիկը.

Առաւ ակնոց,

Մի ողջ կապոց.

Ակնոցները փոքր ու մեծ

Ձեռքերին էսէնց էնէնց

Մին դնում է իր գլխին,

Մին էլ պոչի մէջտեղին,

Մին լիզում է, թքոտում,

Մին էլ սրբում, հոտոտում,

Հա փորձում է, հա փորձում,

Բայց ակնոցը չի գործում.



էն պօսպղուն ապակին
 Լոյս չի տալիս պապիկին:
 «Կորչեն, գոռաց, ջուխտ
 ու կենա,
 նա է յիմար, նա է խենթ,
 Ով լսում է հետհետին
 Մարդկանց հազար մի ստին.
 Սրանց մասին
 Ինչ որ ասին,
 Սնւա է, սուտ.

էս ապակին
 Խաւար աչքին
 Ի՞նչ օգուտ»:
 Ու կապիկը՝
 Ծեր պապիկը
 Խորը վշտով ակնոցները
 Էնպէս խփեց չոր քաշին,
 Որ ջուր կտրած փրշանք-
 ները
 Կանաչ-կարմիր կապեցին:

30. Ծ Ո Յ Լ Տ Ղ Ա Ն

— Սերօք, որդիս, — ասում է հայրը, — մի գնա հարևանից արշինը բեր, կտաւը չափենք:

— Է՛, բան չունես, հայրիկ, պատասխանում է Սերօքը, ինչ նեղութիւն տամ հարևանին: Ես գիտեմ որ մեր կատուն պոչից սկսած մինչև ականջի ծայրը մի արշին կըլինի: Էլ արշինն ի՞նչ կանենք:

— Սերօք, Սերօք, — ասում է հայրը, — ապրես դու, մի գնա հարևանից գրւանքանոցը բեր, պանիրը կըռենք:

— Է՛, բան չունես, հայրիկ, ինչ նեղութիւն տամ հարևանին. այ մեր սատկած էշի սմբակը, ես գիտեմ, որ մի գրւանքայ կըլինի:

Սերօք, Սերօք, դու ինձանից թեթև ես, մի դուրս վազի, տես եղանակն ի՞նչպէս է:

— Է՛, հայրիկ, էլ ի՞նչ գնամ: Կուզես կանչեմ շանը, թէ Բասարի մագերը չոր են, եղանակը հօ պարզ է:

— Սերօք, Սերօք, — շունչը կտրած ասում է հայրը, — հացը բկիս կանգնեց, ջնւր... ջնւր հասցրու:

— Է՛, հայրիկ, դու էլ որ... պատասխանում է Սերօքը, ինչ դժւար բան կայ, ինձ ես դէմ անում:

Ժրագան փղայ

Մոզան սիրում է շեղ շայր, արեգակ,
 Դրաչր ու պարփիկում ճուրղող թռչնակ,
 Փիւղերից կախ-կախ պրուղներ հասունե,
 Բայց շեղներից աւել պիտի սիրէ ուսում:

Ուրեմն թողէք նա դարոց երթայ,
 Ընկերների հետ գտները նա տայ,
 Եւ երբ որ իր սուրբ պարտքը կատարէ,
 Որքան որ ուզէ, թող նա ձեզ սիրէ:

Այնուհետև ցոլա՛, պայծառ արեգակ,
 Այնուհետև երգէ դու, նաշխուն թռչնակ,
 Եւ անուշ համը հասուն պտուղին
 Թող լինի վարձը ժրջան տղին:

Հանելուկ. Արտը սպիտակ, սերմը սև,
 Չեղբով ցանեմ, աչքով հնձեմ:

32. ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ԲԱՁԷՆ

Թագաւորը որսի ժամանակ իր սիրելի բազէին բաց թողեց նապաստակի յետևից: Բազէն բռնեց նրան: Թագաւորը վերցրեց որսը և որովհետև խիստ ծարաւ էր, սկսեց խմելու ջուր որոնել: Նա մի ձուկ աղբիւր գտաւ, որից ուզեց ջուր խմել: Չուրը կաթ-կաթ էր գալիս: Երբ լցեց թասը և թագաւորը պատրաստուում էր խմել, յանկարծ բազէն խփեց նրա ձեռքին իր թևով, ջուրը թափեց: Թագաւորը նորից թասը դրեց ջրի տակը. նա երկար սպասեց, մինչև որ թասը լցեց ջրով: Հէնց որ ուզեց ջուրը խմել, բազէն նորից խփեց թևովը և թափեց:

Երբորդ անգամ թագաւորը լիքը թասը մօտեցրեց իր պապակած շրթուներին, բազէն նորից թափեց շուրը: Թագաւորը բարկացաւ և սպանեց բազէին:



Այդ ժամանակ հասան թագաւորի ծառաները: Նրանցից մէկը վազեց աղբիւրի ափուները, որպէսզի շատ շուր գտնէ և լցնէ թասը: Շուտով վերադարձաւ ծառան դատարկ թասը ձեռին և ասաց. «այդ շուրը չի կարելի խմել. ափունքում մի օձ է նստած. նա թունաւորել է շուրը»:

Թագաւորը սաստիկ տրիւրեց, որ ինքն իր ձեռքով

սպանել է իր կեանքն ազատող բազէին:

Առած. Լաութին սրա, ծովը ձգիր. թէ մարդիկ չօգտեն, ծովի ձկները կօգտեն:

33. ԱՇՆԱՆ ՏԵՐԵՒԸ

Ո՛ր, ինչպէս տխուր
Անյոյս է ողբում
Աշնան տերևը
Թառամանձ տըրտում:

Եւ այդպէս անյոյս
Վիշտը սրտի մէջ,
Տերևը խրղճուկ
Դողում է անվերջ:

Մեղմիկ հառաչով
Լալիս է, հեռում,
Դարևոր ծառին
Հրաժեշտ երգում:




Եւ ահանջ դըրած
Քամու շառաչին,
Զգում է կարծես,
Որ ժամը է վերջին...

34. Ք Ա Մ Ի

Ի՞նչպիսի խիստ քամի էր երէկ: Դա սովորական քամի չէր, այլ փոթորիկ: Նա պոկում էր ծառերի տերևները, կոտրատում էր ճիւղերն ու ոստերը, տակն ու վրայ էր անում բանջարանոցները:

Այդ ժամանակ ես և քոյրս գտնուում էինք պարտիզում: Քամին մի քանի սիրուն ծառեր կոտրատեց, մի քանիսն էլ արմատով հանեց:



Վախենալով, որ քամին կարող է երկար տևել, մենք ճանապարհ ընկանք դէպի տուն: Անցնելով քամու ջրաղացի մօտով, մենք տեսանք, թէ ինչպէս արագ էին պրտոյտ գալիս ջրաղացի թևերը: Մենք հազիւ էինք պահպանում մեր գլխարկները խիստ քամուց: Փորձեցինք պաշտպանել հայրիկի մեծ հովանոցով, բայց քամին անմիջապէս շուռ տւեց նրան: Ես և քոյրս պինդ փաթաթեցինք իրար և շարունակեցինք մեր ճանապարհը:

Քամին մեր յետևից էր փչում և մենք շուտով տուն հասանք:

Քամին ասում է մարագին. դուող բաց, դարման և՛ բերել: Մարագը պատասխանում է. քո դարմանը բեզ, իմը չըտանես:

35. ՈՒՌԵՆԻ

Արբուն ուռեանի,
 կանաչ ուռեանի,
 ծիւղերդ կախի կախի,
 ինչո՞ւ չես ուրախ:
 Արբորդ է ծարաւել,
 արևն է վառել,
 որ է քո քան զառեւ,
 զլիսկդ քա ծռել,
 վշտոք քա դառել,
 ծնկիդ քա իսկու՞մ,
 արցունք քա թափու՞մ:



36. ՍՈՒՐ ԱԿՍՆՁԸ

Նաշխուն թիթեոր բռնելու համար մի աթոռի վրայ բարձրացայ և անզգուշո՛ւ թեամբ յենեցի հայելուն:

Նրա մեխերը մաշւած էին, չրդիմացան ու պոկ եկան. հայելին շրջեց, դիպաւ ժամացոյցին, ժամացոյցն էլ զլորեց մոմակալների և գատարկ ամանների վրայ, և այս ամենը գրիկաց յատակին և ջարդ ու փշուր եղաւ:

Ես երկար ժամանակ ապշած և շմամ էի:

Բակում հաշում էր շունը:

Ծերունի պապս, որ պառկած էր հարևան սենեակում, ինձ իր մօտ կանչեց և սասց.

— Այ տղայ, ինձ տխրալէս թւաց թէ ես ինչ որ աղմուկ լսեցի: Այդ ի՞նչ ձայն էր:

Ես չուզեցի նրան անհանդստացնել և շտապով պատասխանեցի.

— Ոչինչ, պապի. ձեռիցս՝ գրչակոթս վայր ընկաւ:

Գրչակոթդ, որդիս, գրչակոթդ:

Պապս զարմացած տեղից վեր ելաւ, յենեց արմունկին, զէմքին փայլեց մի ուրախ ժպիտ: Նա ուրախութիւնից իմ ուսը թափ տալով՝ բացականչեց.

Յակոբ, որդիս. կարծում են, թէ ես արդէն խլացել եմ: Բայց տես՛ր թէ ինչ սուր ականջ եմ ունեցել դեռ ևս:

37. ՏՂԱՆ ԵՒ ԹՌՉՆԻԿԸ

Նաշխուն թռչնիկ, ո՞ւր ես գնում,
 Քո տունն ու բունն ո՞ւմ ես թողնում.
 Կաց, ինձ համար երգիր երգեր,
 Ապրիր ինձ մօտ ամբողջ ձմեռ:

Ձեր աշխարհում աշուն, անձրև,
 Ծառ ու ճիւղեր առանց տերև,
 Չրկայ արև, տաք-տաք օրեր,
 Ի՞նչպէս երգեմ անուշ երգեր:

— Նաշխուն տղայ, սիրուն տղայ,
Չեմ մոռանայ իմ տունն ու բունն.
Երբ որ կրկին գարունը գայ,
Կըզամ, կ'երգեմ քեզ օրն ի բունն:

38. ԱՆՁՆԻՔԻ ՇՈՒՆԸ


Ձկնորսը մի շատ խելօք, ու հաւատարիմ շուն ունէր:
Մի անգամ այդ ձկնորսն իր ընկերներով մեծ վտանգի
մէջ ընկաւ: Նրանք նաւակով վերադառնում էին ձուկ
որսալուց, բայց դեռ ափին չըհասած խիստ փոթորիկ
բարձրացաւ: Ծովը սաստիկ ալեկոծւեց և նաւակը չէր
կարողանում մօտենալ ափին: Ծովափին կանգնած
մարդիկ ցաւելով նայում էին նրանց, բայց չէին կարո-
ղանում օգնութեան հասնել: Շունն իր խելօք աչքերով
երկար նայում էր դէպի ծովը: Մէկ էլ յանկարծ նա
նետուեց ջուրը և լող տալով՝ գնաց դէպի նաւակը: Ձրկ-
նորսները կարծելով՝ թէ շունն ուզում է իրանց մօտե-
նալ, կանչեցին նրան. բայց շունը չըմօտեցաւ նաւակին,
այլ մի փոքր տարածութիւն հետնելով նրան՝ կարծէք
ինչ որ բան էր պահանջում իր հաշոցով: Վերջապէս,
մի ձկնորս՝ գուշակելով բանի էութիւնը՝ ասաց ընկերին.
«Թոկի ծայրը նետիր դէպի շունը»: Ընկերն այդպէս էլ
արաւ: Շունն իսկոյն ատամներով բռնեց թոկի ծայրը
և լող տալով վերադարձաւ ափը:

Մի քանի բոպէից յետոյ անձնէր շան օգնութեամբ
թէ նաւակը և թէ ձկնորսները ազատուեցին մահից:



39. ՄՈՒԿԸ ԹԱԿԱՐԴՈՒՄ

Մուկը ծակից գուրս եկաւ:
Տեսաւ, համա ինչ տեսաւ,
էն տան մօտիկ անկիւնում,
Ճարպի կտոր է փայլում:
«Ըհը՛, գտայ, լաւ էլաւ»,
Իրան-իրան մտածեց,
Վրա վազեց, մօտեցաւ
Ու թակարդում բռնեց:



40. Ս Կ Ի Ի Ռ Ը

Սկիւռն անտառում շատ լաւ էր ապրում:
Ի՞նչն էր պակաս: Ընկոյզ ասես՝ շատ... կաղին՝
ինչքան ուզես: Չուրը որ՝ կայ ու կայ: Անտառի առնւն
է պակաս, ճահի՞ճն է պակաս: Խմիր ինչքան սիրտդ է
ուզում: Սկիւռը նստում էր արևկողը և իրան համար
տաքանում: Ֆրտելիս մտնում էր ծառի փշակը, թաղ-
ւում էր չոր տերևների մէջ և ընում: Ասածուց էլ ի՞նչ
կուզէր, տեղը համ տաք էր, համ փափուկ:


Չահէլ-Ղիւան օրերն այսպէս անցկացրեց սկիւռը:
Ծերութիւնը-գերութիւնը վրայ հասաւ և ամեն ինչ շուռ
եկաւ: Սկիւռի ատամներն ընկան, աչքերը լաւ չէին տես-
նում, արեգակն էլ ասես առաջ-
ւայ պէս չէր տաքացնում:



Ա՛խ, — ասում է սկիւռը, —
աշխարհը վատացել է, էլ առաջ-
ւանը չէ: Արեգակն էլ ցրտել է,
ինձ չէ տաքացնում. ընկոյզը
պնդացել է, կրծել չի լինի, կաղի-
նը որ՝ Աստուած գլխիցս կտրել է:
Ի՞նչ բան է, ման եմ գալիս, ման,
մի պուտ ջուր չեմ գտնում. ասու-

ները ցամաքել են, ճահիճները չորացել: Չէ, աշխարհը վատացել է, որ վատացել:

Անիծում էր ս'իւրը լոյս աշխարհը և չէր նկատում, որ ոչ թէ աշխարհն է վատացել, այլ ինքն առաջւանը չէ:



41. ԾԵՐ ՉՄԵՌԸ

«Փու-հա-փուհ... փու-հա-փուհ...»

Փչում է ձմռան քամին ահարկու,

«Եկա՛ւ... վա՛յ եկա՛ւ... էլի ետ եկա՛ւ...»

Արար աշխարհում վայնասուն ընկաւ...

Բայց ծեր-երկիրն է, պէտքն էլ չի անում,

Ձիւն մուշտակն իսկոյն մերկ մարմինն

քաշում

Ու տակից իր գետ գրլ-գրլան բերնով

«Օ՛խ-օ՛խ» է անում, ձմռան հերսն հանում...

Հաներուկ. ես եմ մի վերմակ,



Սաստիկ ընդարձակ.

Եւ տարացնում եմ

Եւ մ'ըսեցնում,

Դերձակներին չեմ նարստացնում:


Չ Ե Կ Մ Ա Ր Դ



Դիտեցէք այս պատկերներից իրաքանչիւրը եւ այդ բոլորից դուրս բերէք մի ամփոփ պատմւածք:

Աստուծի հաւը

հաւը օրական մի շու էր ածուծ պա-
ռաւի համար: Քայց պառաւն ազակե-
էր. նա մտածեց. « Եթէ հաւիս շար
կուր քամ, նա մի շուից անելի կը քայց »:
Եւ սկսեց կուր շար քալ, որից հաւը
շար գիրացաւ և շուից կտրուեց:



44. Ք Ա Ր Ը

Մի աղքատ մարդ եկաւ հարուստի մօտ և ողորմու-
թիւն խնդրեց նրանից: Հարուստը ոչինչ չըտեց և հայ-
հոյելով դուրս վռնդեց նրան: Աղքատը չըհեռացաւ: Հա-
րուստը բարկացաւ, վերցրեց քարը և աղքատի վրայ
չպրտեց: Աղքատը վեր առաւ քարը, դրեց ծոցը և ինքն ի-
րան խօսք տեց այնքան ժամանակ պահեց այդ քարը,
մինչև որ ինքն էլ կարողանայ նոյն կերպ վարել հա-
րուստի հետ:

Հասաւ այդ ժամանակը: Ունկոր մարդը յանցանք
գործեց: Նրանից խլեցին բոլոր կարողութիւնը և իրան էլ
բանդը գրին: Երբ նրան բանդ էին տանում, աղքատը մօ-
տեցաւ նրան, ծոցից հանեց քարը և պատրաստուած էր
նետել, բայց յանկարծ թողեց այդ միտքը, քարը ձգեց
գետին և ասաց.

« Ի գնը տեղը այդքան ժամանակ պահեցի այս քարը:
Քանի որ նա հարուստ էր, վրէժ ունէի նրանից, իսկ
այժմ խղճում եմ նրան »:

Ասացածը. Արև լինի՝ մի թաշկինակ չի շորացնի:


Առածներ. Աշխարհը փոխ հաց է:

Պնչ կըբրդես, այն կըկտրդես:

45. Պ Ա Տ Ի Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Յ

Թիկ-թակ, թիկ-թակ...

Ո՞վ է այդ.



— Ժամանակը. — անցնում է:
Նրա ոտքի ձայնն է այդ,
Որ անդադար, շարունակ՝
Թիկ-թակ, թիկ-թակ՝
ժամացոյցում լսում է:

« Ժամանակը, ո՞վ է այդ ».

— Ցուպը ձեռին մի խուլ մարդ.
Շալակն առած մի մեծ պարկ
Թիկ-թակ, թիկ-թակ՝
Մեկ չի լսում, գնում է...

46. Շ Ո Ղ Ի Կ Ը Ե Ի Պ Է Ծ Ի Կ Ը

Չմասն տաք երեկոյ էր: Չիւն էր գալիս ու ձիւնի
սպիտակ փաթիլներն ընկնում էին մութ գետնի վրայ ու
քնում:

Քոյոր փաթիլներն ամպերից իջան ու անուշ քնեցին տաք գետնի վրայ. միայն երկու փաթիլ ուշացել էին, նրանք էլ օդի մէջ խաղ անելով, գալիս էին ցած: Քոյր ու եղբայր էին. քրոջ անունը Շողիկ էր, եղբորը՝ Պէծիկ:

Օդի մէջ պատուելիս մի պատուհան տեսան, որից պայծառ լոյս էր երևում:

— Վայ, ինչ լոյս է, ասաւ Շողիկն ու թուաւ դէպի լոյսը, գնաց թառեց պատուհանի երկաթի վրայ:

— Վայ, ինչ լաւ լոյս է, ասաց Պէծիկն ու ինքն էլ մօտեցաւ, որ նստի երկաթի վրայ, բայց ոտքը սահեց, ընկաւ ցած մի թաց քարի վրայ:

— Շողիկ, ընկայ, ասաց Պէծիկը:

— Դէ, վեր բարձրացի ասաց Շողիկը վերևից: Պէծիկն արաւ թէ վեր թռչի՝ չըկարողացաւ:

— Չեմ կարող, ասաց արի մօտս, Շողիկ:

— Հիմի կրգամ, իսկոյն, սպասիր տեսնեմ՝ ինչ են անում, պատասխանեց Շողիկն ու նայեց պատուհանից ներս: Ներսը մի սիրուն տօնածառ կար՝ կանաչ ճիւղքերը վառած մոմերով ու խաղալիքներով զարդարւած: Մոմերը վառուում, պէծիկն էին տալիս ու փայլուն բոցերն ուրախ-ուրախ շարժում դէս ու դէն: Սենեակը լիքը երեխայ էր: Ամենքն ուրախ պար բռնած ծառի չորս կողմը պատուում ու երգում էին:

Շողիկի աչքերը շացան, երբ նայեց տօնածառին:

— Ի՛նչ լաւ տօնածառ է, մրմնջաց նա:

— Ես էլ եմ ուզում տեսնել, ձայն տւեց Պէծիկը և էլի փորձեց վեր կենալ, չըկարողացաւ:

— Շողիկ, արի:

— Հիմի կրգամ, Պէծիկ ջան, հիմի:

— Դէ շնտ արի:

— Այ հիմի, հիմի, ասում էր Շողիկն ու նայում ներս:

Պէծիկը թաց մութ քարի վրայ դողուն էր ու սպասում քրոջը:

Բայց Շողիկն այնքան տարուել էր տօնածառով, որ

էլ մոռացել էր Պէծիկին: «Ի՛նչ լաւ բան է տօնածառը», մտածում էր նա:

Այդ միջոցին երեխաներն երգեցին նոր տարւայ երգը: Շողիկն էլ ուզեց նրանց հետ երգել, չըկարողացաւ:

— Շողիկ, դէ արի, ձայն տւեց Պէծիկը լացակումած:

Բայց Շողիկն էլ չէր լսում:

Շուտով երեխաներին միրգ տւին և վերջն էլ վիճակով նրանց մէջ բաժանեցին տօնածառի խաղալիքները. ձիերը, սրջերը, նապաստակը ու սոկեզօժ ընկոյզները:

— Օխայ, օխայ, գոչում էին երեխաները և ուրախ-ուրախ ծափ տալիս:

Շողիկն էլ ուզում էր ասել՝ «օխայ»՝ չըկարողացաւ, միայն ուրախ ժպտաց:

Շուտով տօնածառը վերջացաւ և երեխաներն իրանց խաղալիքների հետ ցրւեցին իրանց տները: Յանկարծ Շողիկը յիշեց Պէծիկին...

Պէծիկ, ձայն տւեց անհանգիստ:

Բայց Պէծիկն էլ չըկար...

Յաճ նայեց Շողիկը, տեսաւ, որ Պէծիկը թաց քարի վրայ այնքան լացել, լացել էր, որ հալւել, կորել էր:

«Վայ» արաւ Շողիկը, ծնկին տւեց ու տխրեց-մնաց պատուհանի երկաթին մենակ նստած Տխրեց, տխրեց, վերջն էլ աչքերից արցունք վազեց ու նա էլ հալւեց, ընկաւ թաց քարի վրայ, կորաւ...

47. ՏՕՆԱԾԱՌ

Մանուկները ծափ են տալիս,
Թռչկոտում են ու վազում,
Թռչկոտում են ուրախ-ուրախ,
Իրար բռնում ու ասում.

«Ջան, ջան, ջան, ջան, շուտ երվառեն
Կանաչ-կարմիր մոմերը
Ու ամենքիս կրբաժանեն
Տօնածառի նւէրը»:



Դիանցէր այս պատկերը և պատմեցէր բովանդակութիւնը:

49. ԲԱՂԴԱԻՈՐ ՄԱՐԴԸ

Մի անգամ պարսից շահը ծանր հիւանդացաւ: Նա կանչեց իր վէզիրներին և հարցրեց. «Ի՞նչ պէտք է անեմ, որ առողջանամ»: Վէզիրներն երկար մտածելուց յետոյ յայտնեցին շահին. «Տէր, եթէ կամենում ես առողջանալ, դու պարտաւոր ես մի բաղդաւոր մարդու շապիկ գտնել և հագնել»: Իսկոյն շահից հրաման դուրս եկաւ, որ ամեն տեղ ման գան, մի բաղդաւոր մարդ գտնեն ու բերեն իր մօտ: Մի կատարեալ բաղդաւոր մարդ չըկարողացան գտնել ոչ թագաւորների պալատներում և ոչ էլ շահի քաղաքում: Վերջապէս մուսնետիկներ գնացին ամեն զիւղ ու քաղաք մի բաղդաւոր մարդ որոնելու համար: Երկար ման գալուց և տեսակ-տեսակ նեղութիւններ կրելուց յետոյ, մուսնետիկները տեսան դաշտում մի հովւի, որ ինքնագոհ ընկած կանաչ խոտի վրայ հանգստանում էր և անհոգ ու ուրախ իր սրինգն էր ածում: Շահի մարդիկը տեսնելով հովւի ուրախ դէմքը և երկար խօսելով նրա հետ, համոզւեցին, որ նա արդարև իրան շատ բաղդաւոր ու երջանիկ է զգում: Եւ երբ նրա շապիկը խնդրեցին շահին տանելու համար, նա յայտնեց, որ ինքը շապիկ չունի:

50

Կոյր աշուղը


Կոյր աշուղը մի փան բախում՝
 Եկել նստել երգ է երգում.
 Երգում է ու սապին փայլի.
 Էնպէս փութը ու սրփայլի.



« Է՛յ պարոններ, երևի՛ կ'ըրան,
 Ով քեանու՛մ է ա՛մեն օր
 կապոյք կամար, արևի լոյս
 ու երեսը իրեն ծօր »:
 Երգու՛մ է ու սապին քապի
 քիսուր-քիսուր ու սրքապի:



51. ՍՐԵՒԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ



Մի գարնանա-
 յին առաւօտ ա-
 ընը բարձրացաւ
 և ասաց աստղե-
 ըին.

— Դէ, սիրուն
 աստղեր, բաւա-
 կան է, որքան
 լոյս աւիք. մնաք
 բարով, այժմ գը-
 նացէք, գիշերը
 նորից կըգաք:

Կառնալով ծա-
 ղիկներին և թռչ-
 շուններին, ասաց.

— Չար թեցէք

ծաղիկներ, զարթեցէք թռչնիկներ, օրը բացւել է, բաւա-
 կան է որքան քնեցիք:

Եւ զարթնեցին բոլոր ծաղիկները, բոլոր թռչունները:

— «Ես պիտի երգեմ», ասաց արտուտը:

— «Ես պիտի ծաղկեմ», ասաց ալ վարդը:

— «Իսկ ես ի՛նչ պիտի անեմ», ասաց ամպիկը, «չը-
 թըջեմ երկիրը»:

Արևը պատասխանեց.

— Թող երգէ արտուտը. թող բացւի ալ վարդը, իսկ
 ամպիկը թող հեռանայ, անձրև չըբերէ:

Թռչնիկներն երգեցին, ուրախ-ուրախ թռչելով օ-
 դում. ծաղիկներն անուշ բուրմունք սփռեցին չորս կողմը:

Արևը նայում էր դէպի ցած և քաղցր ժպտում:

Առած. Մի ծաղկով գարուն չի գայ:




52. ԳՍՐՈՒՆՆ ԵԿՍԻ

Հին անտառում ծերուկ կաղնին
Խորունկ քնից արթնացաւ,
Շուրջը տեսաւ բոյր ու ծաղկունը,
Սիրտը սիրով լցեցաւ:

Ազատ պարզեց իր թևերը,
Կանաչ հագաւ ու կապեց,
Շուրջը սրփուեց մի բուրմունք,
Մեզմ' ու անուշ շրշնջեց:


«Գալց բարի սիրուն գարուն,
Շուտ-շուտ բեր ինձ զով անձրև,
Տերևներիս ցոյ ու գեփիւն,
Կապոյտ երկինք ու արև»:



53. ԵՐԿՐԱԳՈՐԾԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գարնան բացելուն
պէս գիւղացին ցանում է
իր արտը. նա գոգնոցից
ձեռքով վերցնում է հա-
տիկները և շաղ տալիս
արտի մէջ:

Այնուհետև գիւղացին
արօրով կամ գուլթանով
վարում է հողը և ապա
տափանով փափկացնում
է նրան, որպէսզի հատիկ-
ները փափուկ ու տաք



անկողին ունենան. Գար-
նանային արևը տաքացնում
է հատիկը, անձրևը ջրը-

ջրում նրան: Հատիկը տալիս է արմատ, ցօղուն, տերևներ:
Արտը գմրուխտի պէս կանաչում է: Ցօղունները հասկեր
են տալիս: Հասկերի մէջ հա-
տիկներն աճում, ուռճանում
են: Ամառայ վերջին դեղ-
նում են հասկն ու ցօղունը,
հատիկները հասունանում են:



Հնձի ժամանակն է:
Գիւղացին սուր-սուր գե-
րանդիով կամ մանգաղով
հնձում է արտը, խուրձեր կա-
պում և սայլով կամ ձիով կրում
գէպի իր կալը: Կալում
գիւղացին կալսում է ցորենը,
գարին, հաշան է անում: Մա-
քո-ր ցորենն ու գարին աճում
է շտեմարանը, իսկ յարզը
մարագն է լցնում, որպէսզի
ձմեռը կեր ունենան- անա-
սունները:



Աշնանը գիւղացին ցորենը
տանում է ջրաղացը և ա-
ղում է: Մաքուր ալիւրը բե-
րում է տուն և իր ձմեռայ
պաշարը տեսնում:



Ձմեռը գիւղացին տաք
յօղայում նստած՝ վայե-
լում է իր արդար վաս-
տակի պտուղները և հան-
գստանում, որպէսզի գար-
նան բացելուն պէս նորից սկսէ իր ծանր աշխատանքը:



54. Գ Ա Ր Ո Ւ Ն

Չուզեւի են կրկին
Անտառ ու այգի,
Վշտում է ուժգին
Չուրը գետակի:

Հաւքերը սիրուն
Համերգ են կազմել,
Արտում ու դաշտում
Երգ ու հորովել:

Թիթեաներն ուրախ
Թռչում են դէս դէն...
Չան, տեսքիդ մատաղ,
Գարուն է արդէն:

55. Ա Ռ Ա Ջ Ի Ն Չ Ն Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր Ը

I.

Երկար ու սպիտակ միրուքով ծերունին նստել էր
ու միտք էր անում: Մութ ու ցուրտ էր նրա շուրջը:

«Աշխարհիս մէջ չըկայ մէկը, որ ինձ չափ գործ ա-
րած լինի»: Ասում էր նա և սկսում էր համարել իր
գործերը:

Իր չորս կողմը լուռ էր: Յանկարծ մի ձայն հասաւ
նրա ախանջին:

—Սա ինչ աղմուկ է, ասաց ծերը: Չէ որ ես
ամենքին լռեցրել եմ: Այս ձայնը նման է ջրի կարկաչին...
բայց չէ որ ջրին էլ հրամայել եմ լռել: Այս աղմուկը
թռչունների երգի է նմանում... բայց ես բոլոր թռչուն-
ներին հետու հարաւն եմ ուղարկել:

II.

Ծերունու խօսքը դեռ բերանն էր, երբ տեսաւ, որ
մի սիրուն տղայ է կանգնած իր առջև:

—Քեզ ո՞վ թոյլ տւեց, որ այստեղ գաս, ասաց ծե-
րունին:

—Մի բարկանար, ծերուկ, եկայ տեսնելու քո գոր-
ծերը: Ասա տեսեմ, ինչ է՞ քո ոյժը:

—Ես փչում եմ և գետինը ծածկւում է սառույցով,
ասաց ծերունին:

—Իսկ ես փչում եմ սառույցի վրայ և նա հալչում
է, պատասխանեց տղան:

—Ես գլուխս թափ եմ տալիս և երկիրը ծածկւում
է ձիւնով:

—Իսկ ես թափ եմ տալիս գանգուր մագերս, արե-
գակը իսկոյն ծագում է և հալեցնում ձիւնը:

—Ես հրամայում եմ թռչուններին հեռանալ օտար
երկիրներ և նրանք հնազանդւում են ինձ:

—Իսկ ես ասում եմ «Թռչուններ վերստացարձէք» և
նրանք գալիս են ու երգում:

—Երբ ես ցուրտ մատներովս մօտենում եմ տե-
րկներին, ամենքն էլ սարսափած թափւում են ծառերից:

—Ես երբէք չեմ տեսել տերկների թափւելը: Ես
միշտ տեսնում եմ նրանց կանաչ, դալար և ուրախ, պա-
տասխանում է տղան:

III.

Ծերն ու տղան այսպէս խօսեցին ամբողջ գիշերը:
Ծերունին յոգնել էր, մինչդեռ տղան հետզհետէ աւելի
էր զւարթանում:

Լոյսը բացւեց, արեգակը փայլեց ու թռչուններն
սկսեցին ուրախ երգել:

Տղան հասկացաւ, որ ամենքն էլ իմացել են իր
պալուստը, դարձաւ, որ մնաս բարով ասէ ծերունուն:

Բայց ծերունին չըկար...

Ծերունին չըկար, բայց նրա նստած տեղը երևում
էին ձիւնի վերջին մնացորդները:

Տղան մօտեցաւ ու տեսաւ, որ նրանք ոչ թէ ձիւնի
մնացորդներ են, այլ ճնծաղիկներ, գարնան առաջին
նշանները:

56. ՂԱՐԻՊ ՄՇԵՑՈՒՆ

Ղարիպ ախպէր, արի մեր տուն,
Բուք-բօրանին ուր կերթաս,
Հերիք այդքան թափառելով,
Սն դարդերդ քամուն տաս:

Անտուն ախպէր, արի մեր տուն,
Էս էլ հայի օջախ է,
Քի պաղ ջուրս, սև-չոր հացս
Քեզ յէս ախպօր հալսլ է:

Մշակ ախպէր, արի մեր տուն,
Դարդդ ու ցաւդ ինձ պատմէ,
Լաց-լացի տանք էս մեծ տօնին,
Սիրտս լացի կարօտ է...

57. Շ Ե Ր Ե Փ Ո Ւ Կ Ն Ե Ր

«Մայրիկ ջան, մայրիկ, շուտով գնանք լճակի ափը.
Ինչ բաներ մենք տեսանք այնտեղ, գնանք շուտով»,
ասացին երեխաները, ներս վազելով մօր սենեակը:


Մայրը երեխաների հետ գնաց դէպի փոքրիկ լիճը,
որ գտնուում էր պարտիզի մէջ:

Լճակի ափին վիստում էին բազմաթիւ շերեփուկներ:
Երեխաները զարմանքով ցոյց էին տալիս մօրը շերեփուկները, որ նրանք մինչև այդ օրը չէին տեսած:

— «Մայրիկ ջան, այս ինչ ձկնիկներ են»:

«Սրանք ձկնիկներ չեն, այլ գորտուկներ, որոնց շերեփուկ են ասում: Մանուշ ջան, գնա, տանից մի աման բեր: Մենք կրթունենք մի քանի շերեփուկներ և դուք ձեր աչքով կրտսնէք, թէ ինչպէս նրանք փոխելու են իրանց կերպարանքը»:

Մայրը բռնեց մի քանի շերեփուկներ և ձգեց ջրով



լիբը ամանի մէջ: Ապա ամանը դրեց պատրշգամբի մի անկիւնում, ուր արև չէր ընկնում:

Երեխաներն ամեն օր գալիս էին նայելու շերեփուկներին:

Հինգ օրից յետոյ շերեփուկների վրայ երևացին երկու յետին թաթիկները, որոնց հետևեցին երկու առաջինները:


Անցաւ էլի չորս օր: Երեխաները նկատեցին, որ շերեփուկների պոչերը կարճա-

նում են և միաժամանակ փոխուում է նրանց կաշւի գոյնը:

«Այժմ սրանք իսկական գորտուկներ են», բացականչեցին երեխաները:


Երբ գորտուկները մեծացան, երեխաները նրանց ձգեցին լճակը: Բայց գորտերը միշտ ջրի մէջ չէին ապրում: Նրանք երբեմն-երբեմն դուրս էին գալիս ափը և խաղում էին լճակի ափին բուսած փափուկ խոտերի մէջ:

Առած. Մինչև ատուն ջուր գայ, գորտի աչքը դուրս կը գայ:



Աս֊գեր

Չո՛ւ, զո՛ւ, շափափեր,
 Ան ու սպիրակ ի՞՞՞ շափեր,
 Էների՛ք, որչափ լողացի՛ք,
 Կարժիր ուրներ լուացի՛ք:
 Էների՛ք, որչափ գեպի ծօր
 Արդեր կերա՛ք դու՛ք փղձուր.
 Չնան՛ք, զնան՛ք դէպի փունն,
 Զես կուր կը փամ իրիկունն:



59. Ե Ր Կ Ր Ա Կ Ո Ր Ծ

Ո՛հ երկրագործ, երկրագործ,
 Քանի սիրուն է քո գործ:

Արևը չըծագած՝ մաճն է քո ձեռքիդ, եօթը գոյզ եդ,
 գոմէջ լծած գուլթանիդ, ծրում ես, պատում դու կոշտ
 ու խոպան լեռներ ու ձորեր, հանդ ու անդաստան:

Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի, հաճար ու վարսակ,
 բրինձ ու բամբակ: Ծլում են ծաղկում ճակատիդ
 քրտինքով քո վարած դաշտեր, որ լի էր փշով:

Անցնում է գարուն, ոսկեգօծ հասկեր լցում, ծածկում
 են քո սիրուն արտեր. քամին փչում է, արտը տատանում,
 կարծես նոր-հարս է, հօրանց է գնում:

Հասնում է ամառ. մանգաղը ձեռքիդ, հնձում ես,
 հնձում, խուրձեր կապտում, խուրձերը բարդ-բարդ սայլով
 ու ձիով կրում ես, բերում, կալումդ դիզում: Հաշան
 ես անում, կալում ու քամում, մաքուր ցորենը տանդ

ամբարում, իսկ չոր դարմանը՝ ձմեռան պաշար՝ անասուններիդ համար՝ մարաքդ լցնում:

Եւ երբ գալիս է ցուրտ ձմեռը, խրճիթում նստած,
 քո խոփն ես սրում, արօր ու գուլթան սարքում, պատրաստում
 և դարնան գալուն նորից սպասում:

Ո՛հ, երկրագործ, երկրագործ,
 Քանի սիրուն է քո գործ:

Հանելուկ. Բռնեմ ափովս, շաղ տամ թաթովս, մեռնի տարովս,
 ապրի բարով:

60. Հ Ա Ս Օ Ի Ե Ր Գ Ը

Ահա ծագեց կարմիր արև,
 Տաք և պայծառ է օրը:
 Դէհ, քաշեցէք, սիրուն եղներ,
 Առաջ տարէք արօրը:

Վարը վարենք, աղօս ծրենք,
 Խոր աղօսներ հողի մէջ,
 Սերմեր ցանենք, որ հունձ հնձենք,
 Խուրձեր դիզենք կալի մէջ:

Կրգայ ձմեռ, մենք վախ չունենք,
 Ուրախ կանցնի մեր օրը.
 Ուտելու միշտ պաշար ունենք,
 Երբ լիք լինի մեր հորը:

Դէհ, քաշեցէք, սիրուն եղներ,
 Շուտով վարենք արտերը,
 Թող՝ էլ չասեն մեր դրացիք,
 Ծոյլ են Հասօի եղները:



61. ԱՐԾԻԻԸ ԵՒ ԱԳՌԱՒՆԵՐԸ

Մեր անտառներում բուն դրեց արծիւը և սկսեց շարունակ յարձակել ազոաների վրայ: Օրական մի քանի ազոաւ զոհ էին գնում նրա անկուշտ որկորին: Վերջապէս ազոաները հաւաքւեցին, խորհուրդ արին և ամբողջ երամով յարձակեցին արծւի վրայ: Արծիւը խփեց կտուցով, թևերով սպանեց մի քանի տասնեակ ազոաներ և ցրեց նրանց երամը: Կուրի դաշտում մնացին միայն սպանւածներն և վիրաւորւածները: Բայց զրանով չըվերջացաւ կռիւը: Կէս ժամից յետոյ ազոաւները վերադարձան աւելի մեծ թւով. այս անգամ նրանց բանակը բաղկացած էր մի քանի հազար թռչուններից:



Արծիւն զգաց իր վտանգաւոր դրութիւնը, փորձեց փախչել, բայց ազոաները բաժանւել էին հինգ մասի և ամեն կողմից շրջապատել էին նրան:

Նորից սկսեց կռիւը. մի քանի հարիւր ազոաներ զոհ գնացին ուժեղ թշնամուն, մի քանի հարիւրն էլ վիրաւորեցին, բայց հսկայ արծիւն էլ ուժասպառեղած՝ գետին գլորեց: Այդ ժամանակ ազոաների միջից շոկնեցին հինգը, մօտեցան վիրաւոր արծւին և սկսեցին կոցահարել նրան. երբ համոզւեցին, որ նա արդէն փչել է իր վերջին շունչը, ուրախութեամբ վերև բարձրացան և միւսների հետ հեռացան կուրի դաշտից:



62. ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

Ի՞նչ կայ, էրնակ,
Ա՛յ ծիծեռնակ
էդ քնքուշիկ քո բկում,
Որ դու էդպէս
Հազար տեսակ
Գեղգեղում ես ու երգում:

Առաւօտայ էն սուրբ ծէգին
Բաց ես անում կտուցդ,
Անուշ ձէնով ու սրտաղին
Ծըլ-ըլում ես հոգուցդ:




Ի՞նչ կայ, էրնակ,
Ա՛յ ծիծեռնակ,
էդ քնքուշիկ քո բկում,
Որ դու էդպէս
Հազար տեսակ
Գեղգեղում ես ու երգում:

63. Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՅԱՆՈՒՄ

Մի անգամ գիւղացին դաշտում ցորեն էր ցանում, իսկ տղան օգնում էր նրան:

Երբ նրանք տուն էին վերադառնում, որդին հարցրեց հօրը. «Ցորենը մարդիկ են ցանում, բայց ո՞վ է ցանում դաշտի խոտերը և անտառի ծառերը»: Այդ ժամանակ քամին տանում էր խոտի սերմեր: Հայրը այդ սերմերից մէկը բռնեց, ցոյց տւեց որդուն և ասաց. «Ահա տեսնում ես, սա խոտի սերմ է: Քամին տանում է այս սերմերը և ամեն տեղ ցանում»: Ուրեմն, քամին ցանում է, մտածում է տղան:



Հայր և որդին առաջ են գնում: Նրանք տեսնում են, որ թռչնակը կտցահարում է պտուղը: Օգտելով դէպքից, հայրն ասում է որդուն. «Պտուղների մէջ սերմեր կան, թռչունները պտուղների հետ ի միասին դէս ու դէն են շաղ տալիս և սերմերը»: Ուրեմն, թռչունները նոյնպէս ցանում են, մտածում է տղան:

Նրանք շարունակում են իրանց ճանապարհը: Տեսնում են, որ առևակի ջրի մէջ լող են տալիս զանազան բոյսերի սերմեր և նրանցից մի բանիսն ափն են դուրս եկել: Ուրեմն, ջուրն էլ ցանում է, մտածում է տղան:

Չլին նկատում է, որ իր շորերին ևս կպել են զանազան սերմեր: Նա թափ տւեց շորերը և սերմերն ընկան հողի վրայ: Տեսնելով այս, հայրն ասաց. «Ահա դու ևս ցանում ես: Քո Բօղարի մազերին նոյնպէս կպել են սերմեր»: Ուրեմն, մինչև անգամ մեր Բօղարը, ցանում է, մտածեց երեխան:


Տղան շատ ուրախ էր, որ այդ փոքրիկ զբօսանքի ժամանակ այդքան շատ նորութիւններ իմացաւ:

Առած. Ինչ կրցանես, այն կրնձես:

Հանկուկ. Սեւ հինեմ՝ կանաչ գործեմ, դեղին կտրեմ:

64. ԾՆՃՂՈՒԿՆԵՐ

Կոտ ու կէս կորեկ ունեմ
ցանելու համար,
Ճնճղուկներ թռան եկան
ուտելու համար,
Կոացայ քար վեր առայ
զարկելու համար:
Ղանաբներ դանակ բերին
մորթելու համար,



Աղջիկներ թե քաշեցին փետրելու համար,
Պառաւներ պղինձ դրին եփելու համար:
Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,
Տէրտէրներ խաշով եկան օրհնելու համար,
Աշուղներ սազով եկան գովելու համար:


Ա՛յ ճնճղուկի,
Կարմիր տոտիկ,
Միպտակ փոքրիկ,
Ուտեն կուտիկ,
Խմեն ջրիկ
Առի եզրիկ,
Պատիկ-մստիկ:

Փախչեն, երթան ման գալու համար:

65. ԱՆՃՈՒՆԻ ԾՈՒՏԻԿԸ

Առաւօտը վաղ զարթեց Մարիամ տատը, մտաւ հաւաքունը, փափուկ խոտ լցրեց զամբիւղը և տասերեք ձու դրեց մէջը: Տատիկի հաւը թուխս նստեց այդ ձուերի

վրայ: Նա երեք շաբաթ տաքացրեց ձևերը: Հետզհետե ձևերից դուրս եկան ճուտիկները: Ճուտիկներից մէկը ա-
.ելի ուշ-դուրս եկաւ և ինչ որ անճոռնի տեսք ունէր. նա
բրդոտ էր, դեպիւն, թաթիկները կարճ էին, իսկ կտուցը
լայն ու տափակ:



Տեսնելով անճոռնի ճուտիկին, մայրը սաստիկ տըխ-
րեց, բայց յետոյ հան-
գստացաւ, մտածելով՝ թէ
նա էլ կրմեծանայ ու
միւսների պէս կրգեղեց-
կանայ:

Հաւ մարիկը հպարտ-
հպարտ կռթկռթալով, իր
ճուտերին տարաւ լճակի
ափը, որ նրանց սովորեց-
նէ ջրից որդեր հանել:
Անճոռնի ճուտիկը ջուրը
տեսնելուն պէս՝ ընկաւ
մէջը: Հաւը կշկշուժ էր,
թևերը թափահարում, ու-

զում էր իրան ջուրը ձգել փոքրիկին փրկելու համար:
Ճուտիկները նոյնպէս իրար էին խառնել, աղմուկ-աղա-
ղակ էին բարձրացնում, որ բարի մարդիկ եղբօրն աղա-
տեն խեղդելուց:

Բայց եղբայրը չէր խեղդոււմ, այլ հանգիստ լող էր
տալիս ջրի երեսին:

Այս աղմուկի վրայ Մարիամ տատը դուրս վազեց
տանից: Տեսնելով անճոռնի ճուտիկին, նա ձեռքերը ծրնկ-
ներին խփեց և ասաց. «բօռանամ ես, հաւի տակը բաղի
ձու եմ դրել»:

Առաձներ. Նոր հաւերին ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, հին հաւերին քշա՛, քշա՛, քշա՛:

Հաւը երսզում կուտ է տեսնում.

Հանելով. էն ի՞նչն է. շուրջը արծաթ, մէջը ոսկի:



66. ԾՏԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ծիտիկները հարսնիք ունեն.

Ճըզը՛ր-վըզըր, ճըզը՛ր-վըզըր:

Պար են գալի, էլ քանի՛ պար—

Մէկի տեղակ հարիւր, հազար:

Հաւաքել են խնամիներ,

Հարս ու փեսայ. սանամէրներ,

Կեսուր, կեսրար, տէգերկնիկ,

Մենակ չըկայ քաւորկնիկ.—

Թը՛ր՛ոռ, դէ թոէք

Գնանք բերենք:

Ծիտիկները հարսնիք ունեն.

Ի՛նչ զըժոց է կաղնու ծառին,

Բաղչի պատին, կտրան ծէրին...

Տաս չեն, քսան—հարիւր, հազար:

Միրգ են բերել մէրու ծառից,

Կուտ են բերել ճամփաներից,

Գարի, կորեկ՝ հանդ ու արտից—

Հարսը ասաւ.— դեռ քիչ է, քիչ...
Թը՛ր՛ոռ, դէ թոէք,
Գնանք բերենք:

Հանելով.

Ոչ ցորեն եմ, ոչ գարի,
Որ հողագործն ինձ ցանի.
Առանց ձեռի հունցած եմ,
Առանց կրակ թխած եմ.
Թոնիր, ջաղաց տեսած չեմ.
Չեր ամենի սիրածն եմ:

Գարուն

Գարուն է: լեռների գլուխները դեռ
 սպիտակին են քալիս հեռուս, իսկ
 դաշտերն արդեն զարդարւած են
 գոյն գոյն ծաղիկներով: Օդը լի է անոց
 հոսով: Թռչուններն ուրախ երգուծ
 են ծառերի վրայ:

Արեխաները գիւղից դուրս, կանաչ
 ճարգագեղնուծ խաղուծ են, վապուծ են,
 ծաղիկ են փաղուծ, փնգեր կապուծ:

Արանց զարթ շայները լուուծ են
 հեռուից:



68. Ա Ր Ա Գ Ի Լ

Արագիլ, բարով եկար,
 Հայ, արագիլ, բարով եկար.
 Դու մեզ գարնան նշան բերիր,
 Մեր սրտերը ուրախ արիր:

Արագիլ, երբ գնացիր,
 Դու մեզանից երբ գնացիր,
 Հա փշեցին բուբ ու բորան,
 Ծաղիկները ամեն տարան:

Արագիլ, բարով եկար,
 Հայ, արագիլ, բարով եկար,
 Բունըդ շինի դու մեր ծառին,
 Մեզ մօտ մնա ամբողջ տարին:

Արագիլ, բարով եկար,
 Հայ, արագիլ, բարով եկար.
 Դու մեզ գարնան նշան բերիր,
 Մեր սրտերին արև բերիր:

69. ԳԹԱՍԻՐՏ ԱՐԾԻԻԸ

Վանդակի մէջ պահուծ էին մի արծիւ, որին կե-
 րակրուծ էին կենդանիների մտով և մանր թռչուններով:

Մի անգամ վանդակի մէջ գցեցին մի կենդանի ագ-
 ոաւ: Արծիւը նայեց նրա վրայ խիստ հայեացքով, թա-
 փահարեց թևերը, շարժեց ճանկերն ու կտուցը և պատ-
 րասուեց ուտելու... Ագռաւը մի րոպէ անշարժ մնաց,
 ապա երկիւղից բարձրաձայն կատեց. յետոյ կամացուկ
 մօտեցաւ արծիւն և լուռուժուն լի սկսեց նայել նրան
 աղերսալի աչքերով, որոնք կարծես ասուծ էին.

Տէր իմ, գիթա ինձ, խնայիր իմ կեանքը...

Արծիւը հանդարտ կանգնած էր և կարծես թէ մըտ-

քումը մի բան էր վճռում: Վերջապէս գթասրտութիւնը
յնղթեց ազահութեանը: Թռչունների թագաւորը կտցով
կամացուկ խփեց ազուաւի գլխին, որ նշանակում էր.

— Դու չես մեռնի ..

Այդ օրւանից արծիւն ու ազուաւը ապրում էին նոյն
վանդակի մէջ և շատ էին սիրում միմեանց: Մի քանի
ժամանակից յետոյ, երբ ազուաւին դուրս հանեցին վան-
դակից, արծիւը խիստ տխրեց: Նա ուրախացաւ միայն
այն ժամանակ, երբ նորից ազուաւին ձգեցին վանդակը:



70. ԿՈՌԻՆԿՆ ՈՒ ՍԱԳԸ

Կապուտակ լճի ջրի երեսին
ճարպիկ ու արագ սագիկն էր լողում,
Սուրում ջրի տակ, դուրս գալիս կրկին,
Եւ ինքն իրան բարձրաձայն գոփում.

— Օգում թռչում եմ, ցամաքում շրջում,
Լճակի ջուրը պատում նետի պէս.
Ինձ պէս ուրիշը չրկայ աշխարհում,
Ողջ թռչունների թագաւորն եմ ես:

— Իզուր ես գոփում, յիմար, ինքդ քեզ.
Կուռնկը նրան ձայնեց վերևից.

Կարո՞ղ ես արդեօք լողալ ձկան պէս,
Եղնիկի նման վազել քարափից.

Արծրւի նման հպարտ, փառաւոր,
Կարո՞ղ ես պատել ծալքերն ամպերի...
Լաւ է գիտենալ մի բան հիմնաւոր,
Քան թէ շատ բաներ, բոլորն էլ թերի...



71. ՀՈՂԱԳՈՐԾԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Փրանսիայի անտառներում, դաշտերում և ճանա-
պարհներին փայտէ ձողերի վրայ կախած է հետեւալ
յայտարարութիւնը.

«Ոգնին կերակրում է մկներով, խխունջներով, թըր-
թուռներով և հողագործի համար վնասակար ուրիշ կեն-
դանիներով, — մի սպանէք ոգնուն»:

«Խլուրդը կերակրում է թրթուռներով և զանազան
վնասակար ճիճուներով. մի սպանէք խլուրդին»:

«Դողոշը (մեծ գորտ) իւրաքանչիւր ժամում ոչնչաց-
նում է մինչև 30 ճիճու, — մի սպանէք դողոշներին»:

«Մայիսեան բզէզները, թրթուռները և ճիճուները հո-
ղագործութեան զլխաւոր թշնամիներն են: Միայն թըռ-
չունները կարող են հեշտութեամբ ոչնչացնել նրանց:
Թռչունների բներից մի հանէք ոչ ձու և ոչ էլ ձագ»:

72. ՓԱԹԻԼՆԵՐԸ

Չարածճի ու կուարար
Փաթիլները պաղ ձիւնի
Ուրախ խաղում, զարկում իրար,
Հրհրում են մին մինի:

Ապա յոգնած իջնում դետին,
Գրկերում են իրար հետ,
Ու շուր գառած երգով ուժգին՝
Առաջ վազում դէպի գետ:

73. ԱՆՁՐԵԻԻ ԿԱԹԻԼԸ

Գիշերը անձրև էր գալիս, բայց առաւօտը փայլեց
զարնանային պայծառ արեգակը:

Դաշտի խոտերը լւացւել, մաքրւել են. երկինքը կա-
պոյտ է, ամպի կտոր անգամ չըկայ:

Արտերի նորածիլ կանաչը արևի տակ փայլում է:
Մի առու հանդարտ հոսում է գաշտի միջով. նրա
ափին օրօրում է մանիշակը:

Մանիշակի թերթիկից կախւած է անձրևի կաթիլը.
նա յստակ ու մաքուր է: Կաթիլը ասում է մանիշակին.

— Սիրուն ծաղիկ, մի շարժի գլուխդ, քիչ սպասէ,
ես յոգնած եմ, թող մի քիչ հանգստանամ քո կապոյտ
թերթիկի վրայ և ճանապարհս շարունակեմ:

— Շատ լաւ, ազնիւ եղբայր, ասում է մանիշակը:
Բայց որտեղից ես գալիս, որ այդպէս յոգնել ես և ո՞ւր
ես գնում այդպէս շտապով:

— Սրանից շատ առաջ ես ուրիշ բազմաթիւ կաթիլ-
ների հետ գտնւում էի մի լճի մէջ: Այդ լճէն ամեն
օր կաթիլները արևի տաքութիւնից գոլորշի էին դառ-
նում ու երկինք բարձրանում: Հերթը ինձ հասաւ. ես
էլ ընկերներիս հետ վերև բարձրացայ: Ընկերներիցս

շատերը միացան և խոշոր ամպեր դառնալով՝ հեռու եր-
կրներ գնացին:

— Ես դեռ ևս երկնքի մէջ տեղեւ էի. և ահա առու-
ներից, գետերից, ծովերից եկան ուրիշ շատ կաթիլներ
և միացան ինձ հետ: Մենք ամպեր եղանք և ծածկեցինք
երկնքի երեսը: Այս գիշեր անձրև դառանք և վար իջանք,
որ ջրենք բոյսերը:

— Ո՞ւր պիտի գնաս դու այժմ, հարցրեց նորից մա-
նիշակը:

— Հիմա ես պիտի մտնեմ հողի տակ և քո տրմատ-
ները ջրեմ, սիրուն ծաղիկ:

Կաթիլն օրօրւեց, մնաս բարով ասաց մանիշակին և
խսկոյն անհետացաւ:

Մանիշակն ուրախութիւնից բաց արաւ իր թեր-
թիկները և ժպտաց արևի ճառագայթներին:

74. ԵՐԿԻՆՔԸ ՊԱՐՁԵՅ

Երկինքը պարզեց,

Արևը փայլեց.

Ձիւնը հալւեցաւ,

Առուն խոխոջեց:

Դաշտեր ու ձորեր

Եւ սիպտակ սարեր

Հագան, կապեցին

Թաւիչ գգեստներ:

Բարով եկար,

Կանաչ գարուն,

Հազար բարի

Մեր սիրուն.

Տուր առատ բոյս

Մեր դաշտերին,

Ուրախութիւն

Ամենին:

75. ՄՐՁԻՆՆԵՐ

Մի օր Արմենական իրանց պատշգամբի սիւնի վրայ
անթիւ, անհամար մըջիւններ տեսաւ. նրանցից շատերը
սիւնի գլխից արագ-արագ իրար յետևից ներքև էին շտա-
պում, շատերն էլ ներքևից վերև էին բարձրանում: Նա

երկար ուշի-ուշով դիտեց և նկատեց, որ երկու կողմից եկողներն իրար հանդիպելիս մի փոքր կանգ էին առնում, գլուխ գլխի տալիս և յետոյ միասին իսկոյն ներքև էին վերադառնում:

— Էս ի՞նչ բան է, — մտածեց Արմենակը, — թէ վերև են գնում, էլ ինչո՞ւ են վերադառնում:

Շատ մտածեց, բայց ոչինչ չըհասկացաւ: Հարցրեց հայրիկին:

— Նրանք իրանց կամքով չեն վերադառնում, — ասաց հայրիկը, այլ վերևից եկող ընկերներն են նրանց վերադարձնում:

Ի՞նչպէս, — հարցրեց Արմենակը:

Իսկ տեսնո՞ւմ ես, որ հանդիպելիս գլուխ գլխի են տալիս: Նրանք խօսում են:

— Խօսո՞ւմ են:

— Այո՛, իմ սիրելիս, ներքևից գնացողը հարցնում է վերևից իջնողին՝ վերևումը հօ վտանգ չըկա՞յ: Վերևից եկողն էլ պատասխանում է՝ այո՛, կայ: Այս է պատճառը, որ վերև գնացողները ճանապարհը չեն շարունակում ու վերադառնում են:

Մըմենակն ուզեց անպատճառ իմանալ, թէ ի՞նչ վտանգ է այդ վերևում: Բարձրացաւ կտուրը, մօտեցաւ աչք սրբի գլխին, որտեղից մըջիւնները ներքև էին իջնում, և ի՞նչ տեսնի: Տեսաւ, որ սիւնի վերևում սարդը ցանց է հիւսել, ինքն էլ մի կողմում կուշ է եկել, այնտեղից շուտ-շուտ յարձակում է իջնող մըջիւնների վրայ, նրանց բռնում, իր ցանցը քաշ տալիս, վրաներն ընկնում ու ծծում:

Արմենակը մտածեց մի փորձ անել: Սարդի հիւսած ցանցը քանդեց, սարդին փախցրեց, ներքև իջաւ, էլի կանգնեց սիւնի առաջ ու դիտեց:

Մի քիչ յետոյ նա նկատեց, որ վերև գնացող մըջիւնները թէև էլի գլուխ գլխի էին տալիս իջնողների հետ, բայց էլ չէին վերադառնում, այլ շարունակում էին իրանց ճանապարհը դէպի վեր:



76. ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋԻՒՆԸ

Թրոփ-վրոփ մի ճպուռ
Ողջ ամառը շուռ ու մուռ
Երգեց, ճուաց,

Ճըռճուաց:


Մին էլ ըհը՛, ձմեռը,
Փռեց իրա թևերը,
Բացեց գորգը սպիտակ,
Դաշտերն առաւ ձիւնի տակ:
Եկան օրեր ցրտաշունչ,
Ճպուռն ընկաւ լուռ ու մուռնջ:
Քաղցած փորին էլ ի՞նչ երգ,
Ցուրտը տարաւ ոտ ու ձեռք:
Չըն՛ գըր-գըն՛ գըր զողալով,
Ծանր-ծանր սողալով,
Նա մըջիւնին ասում էր.
«Գլխիդ մատաղ, սանամէր,
Մի ճար արա, շունչ առնեմ,
Ցրտից, սովից չըմեռնեմ.
Կերակրրի, տաքացուր,
Մինչև գարուն տպրեցուր»:
— Ի՞նչ խաբար է, իմ սանիկ,
Չարմանում եմ, ա ջանիկ.
Չաշխատեցիր ամառը.
Ասա, ի՞նչ էր պատճառը:
— Էղպէս բանի, սանամէր,
Էլ ով ժամանակ ունէր:

էն խոտերում բուրաւէտ
 Երգում էի մերոնց հետ:
 —Երգում էիր. շատ բարի.
 Այժմ էլ բունի վերվերի,
 Քամին ծափ տայ՝ դու պարի.




77. ԱՆՆԻԿԸ ԳԻՒՂՈՒՄ

Աննիկի տատը ապրում էր գիւղում: Նա մի ամիս
 ժամանակով թռնիկին իր մօտ կանչեց: Աննիկը միշտ




բաղաբունն էր ապրում և երբէք
 գիւղ չէր գնացել, այդ պատճառով
 էլ սաստիկ ուրախացաւ: Որքան
 նոր, անծանօթ լաներ նա տեսաւ
 գիւղում: Նա տեսաւ կանաչ մար-
 գեր ու գաշտեր. սովորեց իրարուց
 ջոկել գարին, ցորենը և հաճարը:
 Տեսաւ, թէ ինչպէս դաշտում գիւ-
 ղացիները մանգաղով քաղում են
 խոտը, ինչպէս նրանք հոտաւէտ
 խոտից բարդեր են կազմում: Տատը նրան տա-
 րաւ մարաքը և ցոյց տւեց երկրագործական
 գործիքները. — գութանը, արօրը, տափանը, գե-
 րանդին, մանգաղը, կամը, փոցխը—և բացա-
 րեց, թէ ինչպէս են նրանց գործածում:



Աննիկը տեսնում էր, թէ ինչպէս արեգակը
 առաւօտեան դուրս է գալիս անտառի յետևից, իսկ
 երեկոյեան մայր մտնում գետակի կողմը: Այնտեղ էին

արածում գիւղի կովերը: Երբ երեկոյեան նստիւրը գիւղ
 էր վերադառնում, Աննիկը
 գնում էր նրան հիմաւո-
 րելու:



Աննիկն ինքն էլ էր
 մասնակցում գիւղական
 աշխատանքներին. ամէն
 օր հաւերին կուտ էր տա-

լիս, պարտիցի ծաղիկները ջրում, բանջարա-
 նոցի ածուկները մաքրում... Աննիկը այնքան
 ուրախ էր, այնքան երջանիկ: Ամիսը շատ շուտ
 անցաւ, իսկ նա չէր ուզում վերադառնալ փոշոտ քա-
 դաքը: Եւ նա մայրիկին նամակ գրեց, որ թոյլ տայ
 իրան մի քանի օր էլ մնալ տատիկի մօտ:

Արեւի մայրիկ

էս այսպէղ այնքան ուրախ եմ, այն-
 քան բաղդաւոր: Ես չեմ ուզում հեռա-
 նալ գիւղից: Ինչպէս եմ ինչ թոյլ քաւ
 մի քանի օր և սմալ բարի քաւրիկիս
 Տօք: Ինչ էլ արի գիւղ, արեւի մայրիկ:
 Գիւղ սասարիկ կարօրցել եմ:

Խաճուրում եմ քեզ և կայրիկիս:

Քո Աննիկ:

79. ԱՔԼՈՐՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏԸ


Օրւան մէկը մի աքլոր
 Քջուջ-մջուջ անելիս՝



Տեսաւ մի հատ մարգարիտ
Աղբի միջին փայլելիս:
Կտցեց, ասաւ. «Էս ի՞նչ է.
Ինձ հարցնես, ոչինչ է:
Այ վա՛յր տամ էն մարդին,
Որ գին կրտայ մարգարտին.
Իսկ ինձ համար մի գարին
Արժէր էսպէս հաղարին»...

80. Ա Ն Ձ Ր Ե Ի

Երկինքը ծածկեց մութ-մութ ամպերով: Ամպերը
գոռգոռացին և փայլակներ արձակեցին: Մէկ էլ յանկարծ



ակսւեց յորդ անձրև գալ: Անձրևի կաթիլները դիպչում են
տների տանիքներին և լուսամուտների ապակիներին. թը-
րը իսկ, հա շըրը իք լսւում է ամեն կողմից: Մարգիկ փակ-
ւում են տներում, որ չըթըլեն: Մի քիչ յետոյ փողոց-
ներում երևում են ցեխոտ փտակներ, որոնք արագու-
թեամբ հոսում են ձորը և միանում գիւղական առւակին,
որը այժմ մի մեծ ու պղտոր ջուր է դառել: Առուն
գնում, միանում է գետակին, գետակն էլ գետին: Իսկ
գետերը... իմացէք, սիրելի մանուկներս, ո՞ւր են գնում
գետերը:

Առաձներ. Անձրևի օրը հաւերին ջուր տալ շատ կրկնի:
Ջուրն ընկնողը անձրևից չի վախենայ:
Ջուրն իր նամփէն կրգանի:

81. ԻՆՁ ՍԻՐՈՒՆ Է...

Ի՛նչ սիրուն է անուշ գարնան
խենթ ու խելառ էն քամին,
Որ սուլում է կտրի վրան,
Թիթիկացնում ապակին:

Ի՛նչ անուշ է սիրուն գարնան
էն անձրևը խելագար,
Կտկտում է կտրի վրան,
Մերթ կամացուկ, մերթ վարար:

Աննման են կանաչ գարնան
Հողմն ու անձրև միասին,
Որ ոռնում են գայլի նման
Սիրուն նաշխում ապակին...



82. ԳԱԶ ՈՉՆԻՆ

Ոգնին սովորաբար իր բունը շինում է ծառերի փու-
չակներում: Նա լցնում է բունը մամուռով ու խոտով և
փափուկ անկողին պատրաստում իր համար: Ոգնին ողջ
օրը բնում է բնի մէջ: Մութն ընկնելուն պէս նա դուրս
է գալիս իր տաք անկողնից և դանդաղ բայերով գնում է
կերակուր ձարելու:

Ահա նա դուրս է եկել բնից: Նա յեցէք, որքան ծիծա-
ղելի տեսք ունի նա. նրա մարմինը կոլոր է և ամբողջո-
վին ծածկած է փշերով, որոնց տակից երբեմն-երբեմն
երևում է փոքրիկ գլուխը...

Ոգնին երկար թափառում է պարտիզում, մինչև որ
գտնում է ծառերից ընկած մի քանի պտուղներ: Լոյսը
կամաց-կամաց բացւում է և նա վերադառնում է տուն:

Ճանապարհին ոգնին
պատահում է մի մեծ օձի:
Օձն ոգնուն տեսնելուն
պէս՝ լեզուն շարժում է և
պատրաստւում է յարձակ-
ւել նրա վրայ: Նրա փոք-
րիկ աչքերը կրակի պէս
փայլում են: Ոգնին ան-
երկիւղ մօտենում է օձին
և յանկարծակի ընկնում
նրա վրայ:



Կռիւր կատաղի է. օձը սուլում է, արագ թռիչքներ
է անում ոգնու շուրջը, բայց չի կարողանում բռնել:
Անվեհեր ոգնին իր սուր ատամներով կծում է օձի մէջքը,
փորը, վիզը... Օձն էլ իր կողմից աշխատում է խայթել
ոգնուն, բայց նա գլուխը ներս է քաշում և փշերն է
զէմ անում: Վերջին անգամ ոգնին դուրս հանեց իր
գլուխը և պինդ կծեց օձի պոչը: Օձն աշխատում էր
ազատւել, բայց անկարող էր: Նա գլուխը մօտեցնում
էր պոչին. ոգնու սուր փշերը քրքրում էին նրա մարմինը:

Գապէս օձը թուլացաւ և մեկնեց: Ոգնին կտոր-
կտոր արաւ նրա մարմինը, կերաւ և դանդաղ բայերով
գնաց իր բունը, որպէսզի հանգստանայ:

Արևը բարձրացաւ կապոյտ երկնակամարի վրայ:
Պարտիզում լսում են Լ. ընկնաների ճիչն ու աղաղակը:
Նրանք ծաղիկներ են քաղում և չըգիտեն, թէ ինչպիսի
մեծ վտանգից է ազատել իրանց ոգնին:

Հանելուկ. Զու կաձի՛ հաւ չի, խոտ կուտի՛ կով չի:

83. ԿԱԶՍԱՆԿՆ ՈՒ ԱԳՌԱԻԸ

Կաշաղակը կշկշալով
Ծառից ծառ էր թռչկոտում,
Իսկ ազոաւը լճու, անվրդով
Նստած՝ ահանջ էր դնում:

— Ի՞նչ ես նստել ահանջ դնում
Լուռ ու անխօս, սիրելիս,
Զրլինի՞ թէ չես հաւատում
Ասածներիս, պատմածիս...

— Չալիկ քուրիկ, ես չեմ ծածկում,
Հաւատալս չի գալիս.
Ով որ քեզ պէս շատ է խօսում,
Շատ ստեր է գուրս տալիս...

84. ԿԱՌԱՊԱՆ ԱՐՁԸ

Մի արջ-պարածող իր արջի հետ մօտեցաւ գինե-
տանը: Նա արջը կապեց դռանը, իսկ ինքը ներս մտաւ
գինետունը մի փոքր ժամանակ անցկացնելու: Նոյն տե-
ղը հասաւ և կառապանը իր եռաձի կառքով. նա լծած

կառքը թողեց զուանը, իսկ ինքը մի բոպէով ներս մտաւ գինեատունը: Կառքի մէջ բորձոններ կային: Սոված արջը նոր եփած բորձոնի հոտն առնելուն պէս կապը կտրեց, սուսիկ-փուսիկ բարձրացաւ կառքը և սկսեց անուշ անել բորձոնները: Չիերը տեսնելով բրդոտ կառապանին, խրտնեցին և ամբողջ թափով վազ տւին զէպի գիւղը:



Արջն իր թաթերով բռնեց կառքի առաջին մասից և շշկւած շրգիտէր, ինչ անէր: Իսկ ձիերն աւելի ու աւելի էին տաքանում: Վախեցած արջը գլուխը այս ու այն կողմն էր շուռ տալիս: Չիերը յետ-յետ էին նայում և աւելի կատաղում: Անցորդները հագիւ էին կարողանում մի կողմ քաշւել: Արջը տեսնելով, որ իր բանը բուրդ է, սկսեց ոռնալ:

Չիերն աւելի խրտնեցին այդ սոսկալի ոռնոցից և ճանապարհից զուրս գալով, թոցրին կառքը: Վերջապէս ձիերը կանգ առան գիւղում, իրանց տան զուանը: Կառապանի կինը նկատեց, որ կառքը ճանապարհով

չէ եկել: Ուրեմն ամուսինս հարբած կրչինի, մտածեց նա: և շտապով դուրս եկաւ բակը: Բայց որքան մեծ եղաւ նրա զարմանքն ու երկիւղը, երբ ամուսնու փոխարէն կառքից վայր ցատկեց վիթխարի արջը:

Կինը վախից սպրդնեց, ձայնը փորն ընկաւ: Իսկ սուրջը, որ նոյնպէս խիստ վախեցած էր, պուկ եկաւ զէպի անտառը

Հաներով. Չորս եղբայրը իրար յետեից վազում են և երէքը իրար չեն համում:

85 ՂՈՉԸ ՈՒ ԳՄՅԼԸ



Մեզ թշնամի:

— Ի՞նչ շուն, ի՞նչ բան,
Այ գոչ անբան,
Աչքդ լաւ բաց,
Գայլն է կանգնած:
— Գայլը... բարի...

Ու ո՛ւ ու... ու ո՛ւ ու...
Գիւղից հեռու
Գայլն է դաշտում
Սովից ոռնում:
Դէմից յանկարծ
Մի մողորւած
Ղոչ է գալիս
Մօտիկ սարից:
Է՛, անասուն,
Կանգնիր իսկոյն,
Ես սոված եմ,
Քեզ պիտ ուտեմ:
— Ի՞նչ, ի՞նձ, ուտես.
Այ ամօթ քեզ.
Շո՛ւնն է հիմի

Մի զէսն արի,
Բերանդ բաց
Ու էգտեղ կաց,
Ես վերեից
Սարի գլխից
Արագ վազեմ
Մէջը մտնեմ:
— Շատ լաւ, ասաց
Գայլը սոված.
Ու շտապեց
Տեղը կանգնեց:
Ղոչը թափով

Գնդակի պէս
- Վազեց, վազեց,
Եղջիւրներով
Որ չըխփեց,
Գայլը շճմած
Ընկաւ ուժգին

Ու շարդոտած
Փուեց գետնին,
Հոչն էլ մտքում
էդ էր ուզում,
Տրտինգ տալով,
Փախաւ շուտով:

Հաներով. Մի մարտը, մ'էջը լիքը ուրագ:

Մայրիկը.

Մի կին իր երեխայի շեռքը բռնած զը-
նայ շուկան: Հանկարծ երեխան քայ
թողեց ձոր շեռքը և յետը ընկնելով, սկը-
սեց լայ լինել:

- Ինչո՞ւ ես լայ լինում, հարցնում են
Յարդիկ:

- Մայրիկիս եմ ուզում, պապասխանում
է երեխան հեկեկալով:

- Ո՞վ է իմ Մայրիկը, ինչպիսի՞ կին է:

- Մայ, միթէ չէ՞ք ծանաչում իմ Մայրիկին:

Նա էլի, որ ամենից լաւ Մայրիկն է:

- Անու՛նն սա՛ս, անու՛նն ինչ է:

- Մայրիկ է, Մայրիկ, Մայրիկ...

87. ՓՈՔՐԻԿԻ ԵՐՍՁԸ

Մի տղայ սիրուն, փոքրիկ, մանկահաս,
Գիշերւայ ըննին տեսնում է երագ:

Առաւօտը վաղ ընից զարթնելով՝
Վազում է պատմում մայրիկին շուտով:

Դեռ կէսը չըհասած, նա մոռանում է,

Դիմում է մօրը և հարցնում է.—

«Յետոյ ի՞նչ եղաւ, ասա, մայրիկ ջան»:

Մայրը ժրպտալով՝ ասում է նրան.—

«Երագդ հրտեղից գիտեմ, բալիկ ջան»:

Տըղան զարմանքով է այժմ հարցնում.—

«Ի՞նչպէս չըգիտես, չէ՞ որ երագում


«Դու ինձ հետ էիր,

«Դու այնտեղ էիր...»:

88. ԼՈՒՍԻՆՆ ՈՒ ԱՍՏՂԵՐԸ

Արևը մայր մտաւ: Ամառնային պարզ երկնակամարի
վրայ փայլեց առաջին աստղը, ապա երկրորդը, երրորդը...
Իսկ երբ անտառի կողմից բարձրացաւ լուսինը, երկինքը
զարդարեց հազարաւոր պըս-
պղուն աչիկներով: Լուսինն
աչք ածեց իր թագաւորու-
թեան ընդարձակ սահմանները,
քաղցր ժպտաց և բացականչեց.
«Սիրուն աստղիկներ — եր-
կնքի ճրագներ, պատմեցէք
ինձ, ի՞նչ էք տեսնում, երբ
վերևից նայում էք երկրին»:

— Ես տեսնում եմ առեակը,
որ շտապում է գէպի գետը: Նա
խոխոջում է, գիշեր-ցերեկ վա-
զում է անընդհատ և երբէք չի յոգնում:



— Ես տեսնում եմ շուշանները, որոնք մեղմ օրոր-
ւում են: Նրանք ծածկել են իրանց գլխիկները և մուշ-
մուշ քնում են:

— Ես տեսնում եմ բրաբրա հաւաւին: Նա ննջում է
խնձորենու տերևներին թառած և երազում տեսնում է
պայծառ ու տաք հարաւը, ուր նա թռչելու է աշնանը:

— Ես տեսնում եմ սարգին, որ նստել է վարդենի-
ների մէջ հիւսած իր ոտտայնի վրայ: Նա սպասում է
լուսը բացելուն, որ ճանճեր որսայ:

— Ես տեսնում եմ ճահճի մէջ մի խումբ բազիկներ,
որոնք մայր բազիկի շուրջը հաւաքւած հանգիստ նըն-
ջում են:

— Իսկ այնտեղ, այն տան մէջ ի՞նչ էք տեսնում,
հարցրեց լուսինը:

Բաց լուսամուտից մենք տեսնում ենք երեք ման-
կիկներ, որոնք քնած են իրանց մահճակալներում և
բազր ժպտում են:

— Հանգիստ քուն եղէք, սիրելի մանկիկներ: Լու-
սինը, աստղերը և պարզ երկինքը պաշտպանում են ձեզ:

*Հանելուկ. Խալիչա ունեմ, թափ տալ չի վնի.
Ոսկի ունեմ, համրել չի վնի:*

89. Գ Ի Շ Ե Ր

Գեղեցիկ ու գով
Գիշեր է պայծառ.
Անուշիկ քնով
Քնած է աշխարհ:

Հեզիկ ու նազիկ
Երգ են սլալում:

Իսկ լայնատարած
Երկնքի վըրով
Լուսինն է կամաց
Անցնում սողալով:

Ծառերը մեղմիկ
Քամուց օրորւում,

Աստղերն էլ սիրուն
Ժրպիտով փայլում,
Իրանց թագուհուն
Ճամփայ են դնում...

Անուշիկ քնով
Քնած է աշխարհ:


Ու քնած երկրին
Գետակըն ու բուն

Գեղեցիկ ու գով
Գիշեր է պայծառ.

Երգով միասին
Օրոր են ասում:

90. ԼՈՒՍՆԿԱՅ ԳԻՇԵՐ

Գարունը նոր էր բացել: Երկու երեխայ դաշտն էին
գնացել ձնձաղիկ բաղելու: Արևը թեքել էր. օրը մթնե-
լու վրայ էր արգէն, բայց դեռ
չէին մտածում տուն վերադառ-
նալ: Խաղի յետևից ընկնելով՝ նրանք
մոռացել էին որ երեկոյին՝ մթնե-
լուց էլ շատ առաջ պէտք է տանը
լինէին:



Ահ ու սարսափը տիրեց խեղճ
երեխաներին. արցունքով լի աշ-
քերը ման են ածում դէս ու դէն,
որ մի բարի մարդ գտնեն, իրանց ճանապարհը ցոյց
տայ: Բայց իզո՞ւր. մթին դաշտում ոչ ոք չըկար, որ
լսէր նրանց լաց ու կոծը:

Յանկարծ մի ինչ որ սիրուն, սույլուն բան է երևում
ծառերի միջով: Կամաց-կամաց բարձրանում է այն կլո-
րիկ ճրագը. դա լուսնեակն է:

Ահա նա ժպտալով ցած է նայում երեխաներին.
«Բարի երեկոյ, երեխաներ, ի՞նչ էք անում դաշտում
այս քան ուշ ժամանակ»:

Երեխաներն սկզբում մի բիչ վախեցան, բայց յետոյ՝
երբ տեսան, թէ դա լուսնեակն էր, սիրտ առան ու
միաբերան կանչեցին. «Ա՛խ, այնքան մութ գիշեր է, որ
ճանապարհ չենք գտնում տուն գնալու»: Հետն ասում

են, հետն էլ լալիս. այնքան ազդու էր այդ լացը, որ մինչև անգամ բարի լուսնեակի գուլթը շարժեց:

«Եթէ գիտէք այն տունը, որտեղ ապրում է ձեր մայրիկը, ապա ես լոյս կրտամ ձեզ, սիրելիք. դէհ, ճանապարհ ընկէք»:

Այս ասաց թէ չէ՛ այնպէս փայլփլեց, այնպէս պէծին տւեց որ կարծես մութ գիշերը ցերեկի էր փոխւած: «Օխայ, լոյս է, լոյս», կանչում են ուրախութիւնից խեղճ երեխաները և շտապ-շտապ դէպի տուն գնում: Հէնց որ հասնում են տան դռանը՝ կանգնում են մի քիչ և բաղջրիկ ժպտով ասում լուսնեակին. «Շատ ու շատ շնորհակալ ենք, սիրուն լուսնեակ, որ դու մեզ լոյս տւիր»:

— Ոչինչ, սիրելիք, միայն թէ շտապեցէք, մտէք տուն, մայրիկը ձեզ երկար-երկար անհանգիստ սպասում է:

91. ՄԱՆՈՒԿԸ ՉՈՐՈՒՄ

Սարի տակից քրչքրչալով

Չուրն է վազում ոլոր—մոլոր,

Չուրն աղբիւրի վճիտ ու գով.

Գնում, թափում ձաղկունանց ձոր:

— Հէյ, աղբիւրի սիրուն ջրեր,

Ես էլ լինեմ ձեզ հետ ընկեր.

Տեսէք, ձեզ հետ ծաղկաձորում

• Ի՛նչպէս եմ ես ուրախ պարում:

Չուրիկ—մուրիկ,

Անուշ քուրիկ,

Ախպէրդ եմ ես,

Սիրում եմ բեզ:

Դու քրչքրչա, ես տաղ ասեմ,
Քեզ հետ մէկտեղ ձորը վազեմ.

Իրար գրկած՝ սարի դօշով
Գնանք, իջնենք ծաղկունանց ծով:

92. ԵՐԵՆԱՆ ԱՐԾԻԻ ՃՍՆԿԵՐՈՒՄ

Գարնանային մի գեղեցիկ օր էր. գիւղացի կինը երեխային նստեցրել էր արտի մէջ, իսկ ինքը բանջար էր քաղում... Նա բաւական հեռացել էր երեխայից, երբ լաւեց նրա ձիւրը: Մայրը յետ նայեց և ահ ու սարսափով տեսաւ իր երեխային արձւի ճանկերում: Արծիւն արագ-արագ վերև էր բարձրանում:

Թշուառ կինը ազմուկ բարձրացրեց, հովիւներին օգնութեան կանչեց: Նրանցից մէկը գիւղը վազեց պարան բերելու, իսկ միւսները թագնւեցին բնի յետևը: Արծիւն երեխային բարձրացրեց վերև և դրեց իր բնի մէջ. այդ ժամանակ թագնւած հովիւները միաբերան բղաւեցին. արծիւր վախեցած՝ բնից դուրս թռաւ և նստեց մօտակայ ժայռի վրայ: Գիւղը գնացած հովիւր վերադարձաւ, պարանի մի ծայրը տւեց ընկերներին և միւսից ինքը բռնելով կամաց-կամաց մօտեցաւ արձւի բնին:

Արծիւր հասկացաւ նրա միտքը և յարձակեց նրա վրայ. հովիւր պաշտպանւեց քարերով և մահակով. այդ բանը նաևեց մի քանի անգամ: Վերջապէս հովիւր հասաւ արձւի բնին, գրկեց երեխային և ցոյց տւեց մօրը, որի ուրախութեանը չափ ու սահման չրկար: Մական արծիւր շարունակում էր իր յարձակումները: Նա պարանը փաթաթեց մէջքին և յաջողութեամբ իջաւ ներքև:

Երեխայի մայրը արտասուքն աչքերին շնորհակալ եղաւ անձնագոհ հովիւից:



93. ԽՐԱՏԻԱԾ ԷՇԸ

«Չնւ... վահ, չու է... Քո ծախողի
Վիզը կոտրւի, այ անբան»...
Ասում էր ու էշին ծեծում
Մի անողորմ իշապան:



Բայց կենդանին յամառութեամբ
Իիք կանգնած էր, չէր գնում,
Ինչքան ծեծում, քրշում էին—
Ոտըն առաջ չէր զնում:

Ինչպէս գնար, ճամփան ցելս էր,
Հէնց այս տեղում նա մի օր,
Լաւ յիշում էր, սայթաքել էր
Ու վայր ընկել թաւազլոր:

Էշն անցեալից խրատել էր,
Էլ հին ճամփով չէր գնում.
Բայց կան մարդիկ... Բաւական է,
Միտքս լաւ էք հասկանում:

94. Ա Մ Ա Ռ

Ամառայ ամիսներին օրերը լինում են երկար և
աւար: Սաստիկ շոգերից քաղաքներում կեանքն անտանե-
լի է դառնում: Քաղաքացիներից շատերը գնում են ա-
մառանոցները մարուր օդ շնչելու և հանգստանալու
համար: Գիւղացիներից էլ շատերը բարձրանում են սա-
րերը, իրանց հետ տանելով նաև անասուններին:

Ամառը հասնում են ամեն տեսակ պտուղներն ու հա-
ցարոյսերը: Մօտենում է հնձի և այգեկութի ժամանակը:

Երբեմն ամառայ այդ շոգերին երկինքը ծածկում է
գորշ ամպերով, փայլատակում է կայծակը, յորդ անձրև
գալիս: Այդ անձրևներից յետոյ օդը թարմանում է, ամեն
ինչ զուգուում, զարդարում է և ուրախ տեսք ընդունում:


95. ՄԵՐ ԾԻՏԻԿԸ

Տես, ինչ սիրուն,
Ինչ չքնաղ է
Էս պատկերը:
Ասան, ասան, իմ անուշիկ,
Իմ մլաւան սիրուն փխսիկ,
Նկարողը դու ես եղել:

- Չէ, իմ բարի խելօք ընկեր,
Էս ծաղկազարդ սիրուն դաշտը,
Վարդ, մանիշակ, ջինջ երկինքը,
Էս զլզլան, պարզ աղբիւրը,
Լեռն ու դաշտը, ծառն ու թուփը,
Հովի հօտը, գառն ու ուլը,
Մեր պարտէզը, տունն ու բակը
Նկարել է էն խատուտիկ,
Պատիկ, ճգտիկ, մոխրաափափիկ
Մեր ծիտիկը:

96. Ա Մ Պ Ե Ր

Ամպեր են վազում բարձր լեռներից, խիստ քամու-
ձեռից. փախչում, գնում են, կարծես խրտնում են ծա-
րաւ արտերից:



Կացէք, այ ամպեր, ինչո՞ւ
էք փախչում, անձրև չէք թա-
փում, մեր ծարաւ արտեր՝
օրեր համբելով՝ ձեզ են սպա-
սում:


Քամի, դու քամի, խղճա
արտերին, թող այդ ամպերին.
Թող կանգնեն, թափեն անձրևի
շիթեր, ջրեն մեր արտեր:

Քամին հանդարտւեց, մեղմ անձրև թափեց, արտերը

Նրեց: Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց ու հասկեր
բռնեց: Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց, խնդաց ու
ասաց.---

Փնօր Գեգ, ոյ Ասաւած,
Որ տւիր մեզ հաց,
Զըթողիր քաղցած:

Ասած. Ամ'պի գոտար անձրեւի նշան է:
Համերուհ. Կաթնատղբիւրից ջուր է խմում,
Արին ծովից ձէն է հանում:



Ամանու փիղը

Մի փղապէր վաւ էր պահուե՞ իր փղ-
ղին. Արկար ժամանակ հաճեցեց փի-

ղը, բայց մէկ օր էլ կորցրեց հաճեցեց-
թիւնը, ոտի քակը չգեց նրան և սպա-
նեց: Ամիրոզ կինը իր բուրբ երեխանե-
րին հաւաքեց, փղի առ զէն ամեց և լա-
լով ասաց. « Դու սպանեցիր սրանց
նորը, կուտրփր և որբերիս, էլ ո՞վ պիտի
պահէ սրանց »: Փիղը մեծ երեխային
կնեխրով վերցրեց, զցուշուրեամբ նստե-
ցրեց իր մէջքին: Արանով ուզեց հաս-
կայնել. « Ես սրան լաւ կը պահեմ.
Թող սա էլ լաւ փրութիւն անէ ինչ »:
Եւ փիղը կայարեց իր խոստումը.

98. ՉՈՐՍ ԵՂՆՅՐ

Չորս եղբայր են, ամեն տարի
Երկրիս վրայ ման են գալի,
Չորսն էլ շոկ-շոկ ունին հասակ,
Պարզեներն են հազար տեսակ:

Փոքր եղբայրն է պատանի,
Բողբոջ, տերև, սաղարթ ունի.
Պայծառ արև, կանաչ արօտ,
Որոնց տղայք են միշտ կարօտ:

Երկրորդ եղբայրն երիտասարդ,
Տալիս է մեզ անձրև առատ,
Ծաղկունք ցանում է ամեն դի,
Յոյս է տալիս առատ հնձի:

Երրորդ եղբայրն է չափահաս,
Մրգերով լի ունի մի թաս,
Բաժանում է տղոց իր գանձ,
Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ:

Չորրորդ եղբայրն է ծերունի,
Յուրա ու խաւար շալկած ունի,
Այգի, անտառ ամայացած,
Իաշտ ու արօտ ձիւնով լըցրած:

99. ՃՆՃՂՈՒԿԸ ԵՒ ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԸ

Մի անգամ ես կանգնած էի բակում և նայում էի ծիծեռնակների բնին, որ շինւած էր տանիքի տակին: Իմ աչքի առաջ նրա միջից գուրս թռան ծիծեռնակները և բուենը մնաց դատարկ:

Կտուրից ցած թռաւ մի ճնճղուկ, նայեց չորս կողմը, թափահարեց իր թևիկները և արագ ներս մտաւ բուենը: Ապա նա գուրս հանեց գլուխը և սկսեց ծլծլար:

Քիչ յետոյ բնին մօտեցաւ ծիծեռնակը: Նա ուզում էր ներս մտնել, բայց հիւրին տեսնելուն պէս ճչաց, թեւերը թափ տւեց և թռաւ:

Ճնճղուկը նոյն տեղում նստած՝ ծլծլում էր:

Յանկարծ բնի մօտ երևացին մի խումբ ծիծեռնակներ: Նրանք մօտ թռան բնին, կարծես, նրա համար, որ նայեն ճնճղուկին և նորից անհետացան:

Ճնճղուկը չըփախեցաւ. նա շուռ տւեց գլուխն և շարունակեց իր երգը:


Ծիծեռնակները նորից մօտեցան բնին, մի ինչ որ բան արին և հեռացան:

Ծիծեռնակները ի գուր չէին մօտենում բնին. նրանցից իւրաքանչիւրը կտուցով ցեխ էր բերում և ծածկում բնի մուտքը: Նրանք շարունակում էին իրանց աշխատանքը. մուտքը հետզհետէ փոքրանում էր:

Սկզբում երևում էր ճնճղուկի պարանոցը, ապա միայն գլուխը, բայց այն ևս շուտով անհետացաւ իմ աչքից: Ծիծեռնակները բոլորովին ծածկեցին անցքը և սկսեցին շուռ գալ տան շուրջը:

Ահա թէ ինչպէս ծիծեռնակները պատժեցին ճնճղուկին:

Ասացա՞ծք. Մէկն ամենքի համար, ամենքը մէկի:



100. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Մի տուն ունինք, տան նման չի.

Գետի ափին, մեծ ժայռի տակ,

Կրկրգած է մէնը-մէնակ:

Գիշեր ցերեկ բայդու շի պէս

Չայն է հանում, գոռում այսպէս.

Թըր՛խկ, չըր՛խկ,

Վը՛շա, ճը՛շա...

Առուն բարձրից ցած է թռչում,

Պատը ծակում, միջովն անցնում:

Յատակումը դղրդոց է,

Շըրըմփոց ու թըրըխկոց է:

Տան մէջ երկու ուժեղ գազան,

Մինը տակին՝ միւսը վրան,

Սոխձի պէս մոնչում են,

Իրար ըռեխ կրծոտում են...

Մրանք մարդ չեն, ոչ արջ, ոչ գայլ,

Ինչ էլ որ տաս, բիչ է դարձեալ.

Հարամի են իսպառ քաղցած,
էլ չեն լսում ոչ խօսք, ոչ լաց:
Դուրս են մղում իրանց փորից
Կերակուրը փոշի դարձած...
Այժմ ասէք, այդ ի՞նչ տուն է,
Որ մինչ այսօր էլ կանգուն է:


101. 0 2

Մանկութեանս ժամանակ շատ էի լսել թունաւոր
օձերի մասին և սաստիկ վախենում էի:

Մի անգամ ամառը քաղում էին մեր այգու խոտը:
Ես թռչկոտում էի նոր քաղած, անուշահոտ խոտերի մէջ:

Հնձւորները հե-
ռու էին. ինձ մօտ
մնացել էր միայն
մեր շուն Բասա-
րը:

Յանկարծ մի
սառը բան անցաւ
ձեռքիս վրայով:
Ես սարսափեցի:
Մի ահագին օձ
դուրս եկաւ խո-



տերի արանքից, ծառս ելաւ պոչի վրայ և ուզում էր ինձ
վրայ յարձակել: Վախից լեզուս կապւեց, ձայն հանել չէի
կարող: Փոխանակ փախչելու ես մնացել էի տեղումս
քարացած: Օձը նայում էր ինձ իր փայլուն աչքերով և
գլուխը այս ու այն կողմն էր շուռ տալիս: Ես ինձ կորած
էի համարում, բայց որտեղից որտեղ, մեր Բասարը
նետի պէս թռաւ և ընկաւ օձի վրայ: Նա բռնեց օձին և
կտոր-կտոր արաւ իր սուր ատամներով: Օձն էլ իր կող-
մից կծում էր շան գունչը, կուրծքը, ոտքերը... Բայց
շուտով ամեն ինչ վերջացաւ. օձի կտորները այս ու
այն կողմն էին թափթփւած:

Իմ լեզուս բացւեց, օգնութեան կանչեցի հնձւորնե-
րին: Նրանք շուտով եկան և ոչնչացրին օձի դեռ ևս ողջ
մնացած կտորները:

Այս դէպքից յետոյ Բասարը փախաւ, աչքիցս ան-
յայտացաւ:

Նա վերադարձաւ երկու շաբաթից յետոյ: Խեղճը
լղարել էր և խիստ փոխւել: Հայրս պատմում էր, որ
շները մի տեսակ խոտ են ճանաչում. ուտում են և
բժշկւում օձի թոյնից:

Առաձներ. Օձը իր տարացնողին կրկծի:

Օձը իր շապիկը կրփոխի, բայց բնատրութիւնը չի փոխի:

Այսպիսին ու լիսպիկը

Դաշպի մուկը հակայ ու չաղ,

Լիսին երկար, ինքը ղօչաղ,

Վօրենալով մի օր մի քան,

Ամասաւ պարիկ վրիպ մըկան.

«Այն, իր քունը կարւամ շինի,

էդ պէս պարիկ մուկ կը լինի...»

էդ քան նիհար, կալից ընկած

Լիսարի ու մս դեռ չի տղած:


Ժարուսը քան մէզ քաւ ամբարում

Թազաւորի կեանք տու վարում.

Ու քում տու միշտ կարագ ու եղ,


կրծում շափար ու նաւը կա՛մ տղ:

Իսկ ես խոպան, ցուրտ դաշտերում
 Հագիւհագ եմ ապրուստ ճարում.
 Բայց տես, բեգնից մեծ եմ, հսկայ,
 Ինձ պէս լիտիկ՝ էլ մուկ չըկայ...» —
 «Մի պարծենար, իմ աչքի լիս,
 Մէկ նայիր, թէ ո՞վ է գալիս»:
 Նայեց էն կողմ դաշտի մուկը,
 Տեսաւ կատուին — ցամբեց թուրբ:
 Պստիկ մուկը իսկոյն փախաւ,
 Իր նեղ բնում շուտ թագ կացաւ.
 Շատ աշխատեց լիտիկ մուկն էլ,
 Բայց չըկարաց ծակը մտնել:
 Կատուն վազեց կաղիկ-կաղիկ,
 Բռնեց դաշտի մըկան չաղիկ:
 «Բա՛ջի, կանչեց տան մըկնիկը,
 Պստիկն է լաւ, թէ լիտիկը...»



103. ՓՈԹՈՐԻԿՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Երբ ես երեխայ էի, ինձ ուղարկեցին անտառը սունկեր հաւաքելու: Ես հասայ անտառը, սունկերը հաւաքեցի և պատրաստուում էի տուն վերադառնալ: Յանկարծ անտառը մթնեց, երկինքը որոտաց և յորդ անձրև թափւեց: Ես վախեցայ և կուչ եկայ հաստաբուն կաղնու տակ:



Փայլատակեց կայծակը, այնքան պայծառ, որ ես փակեցի աչքերս: Իմ գլխիս վերև մի ինչ որ բան պայթեց, դղրդաց. ապա կարծես մէկը խփեց իմ գլխիս: Ես վայր ընկայ և այդպէս մնացի, մինչև որ անձրևը դադարեց:
 Երբ ես ուշքի եկայ, ջրի շիթերը կաթկթում էին ծառերի տերևներից, երզում էին թռչունները, ժպտում էր արևը: Ծերունի կաղնին ճեղքւել էր և նրանից ծուխ էր դուրս գալիս: Այս ու այն կողմը գտնուում էին կաղնու կտորները: Իմ զգեստը թաց էր և կպել էր մարմնիս. զըլխիս վրայ կար ուռուցք, որից նա քիչ ցաւում էր: Ես գտայ իմ զլխարկը, վերցրի սունկերը և տուն վազեցի:


104. ԽՕՄՆԱԿ ԹՌՉՈՒՆԸ

Թռչունը խօսնակ Բնիկ է հիւսում, Ծղօտ կրելով Իր երգն է ասում:	Ու թևին տալով Դէպի դաշտ թռչում, Դաշտերի վրայ Իր երգը կանչում:
Ապրում է այնպէս, Ազատ իր կամքին. Զարթնում է կանուխ, Լուսաշող ծէգին:	Ու ժիր մաճկալը, Լսելով երգչին, Ինքն էլ է երզում Յենւած իր մաճին:



105. ՄՈԾԱԿՆ ՈՒ ԱՌԻԻԾԸ

Մի անգամ մոծակը թռչելով եկաւ առիւծի մօտ և սասց նրան. «Դու կարծում ես ինձանից ուժեղ ես. ոչ, սխալուում ես, դու ինչ ոյժ ունես որ. դու ճիրաններով ճանկաւում ես և ստամներովդ կրծոտում: Ես քեզանից աւելի զօրեղ եմ. կուգես, արի կուենք»: Այս ասելով մոծակը կոււի փողը փչեց և յարձակեց առիւծի վրայ. մերթ նրա թուշն էր կծում, մերթ քիթ ու պոունկը: Առիւծը ցաւից ու կատաղութիւնից թաթերով խփում էր երեսին, ճանկերով պոկում կաշին: Այսպիսով ողջ երեսն արիւնոտեց և ինքն էլ ուժասպառ եղաւ:



Մոծակն ուրախութիւնից բզբաց և թռաւ-դնաց: Թռչելիս յանկարծ նա ընկաւ սարդի ոստայնը. սարդն սկսեց ծծել նրա արիւնը: Խճճելով սարդի հիւսած ցանցի մէջ, մոծակն ինքն իրան ասաց. «Առիւծի պէս ուժեղ պահանին յաղթեցի, իսկ այժմ զզւելի սարդին եմ դո՛ւ գնում»:

106. Մ Ո Շ Ա Կ

Փամանակով կար մի մոծակ,
Մի վիթխարի, մի համարձակ,
Քիթը երկար, պոչը կարճ,
Ո՛վ կրբունէր հետը մարճ:

Տէրը կանգնած յի դռան՝
Մի օր մտաւ նա մտռան.
Գինի խմեց տասը կուժ,
Մարդը ընկաւ վաշ ու վուշ.
Վրայ արաւ շները,
Մոծակը կուեց հետները,
Պատառ—պատառ պատուեց,
Կտոր—կտոր կտրտեց
Ու խմածից աւելի,
Մի մեծ կարաս գինով լի
Գրկեց, թռաւ վրզզալով
Խմեց, երգեց բզբալով:

107 ՉՈՒԹԱԿԱՆՆԱՐ ՎԱՆԻՆ

I.

Չութակահար Վանին մի անգամ նւագում էր հարեւան գիւղի հարսանիքում: Նա իր նւագով ու երգով լաւ զւարճացնում էր հիւրերին: Ուշ գիշեր էր, բայց Վանին պիտի տուն վերադառնար. երկու օր էր տանից բացաւայել էր և խիստ կարօտել էր իր փոքրիկ Չանանին:

Ճանապարհն անցնում էր մթին անտառով: Վանիի քէֆը լաւ էր. նա երգելով ու խաղալով էր գնում: Մէկ էլ յանկարծ նա թրմվաց մի փոսի մէջ, որ շինել էին որսորդները գայլեր որսալու համար:

—Օֆ, Օֆ, կողքս շարդուեց, անիծւիս դու, անպիտան որսորդ. գերեզման ես շինել ինձ համար. խոով մնայ գլխիդ որսը...

Հազիւ էր Վանին խելըր գլուխը հաւաքել, երբ նշմարեց, որ երկու փայլուն աչքեր մթութեան մէջ ուղիղ իրան են նայում:

—Ասուած իմ, սա գայլ է, շնջաց Վանին ինքն իրան և սաստիկ վախեցաւ:

Յիրաւի փոսի թմբին նստել էր մի գայլ և անթարթ պչքերով նայում էր ջուլթակահարին:

Վանին վերցրեց ջուլթակը և նւագեց: Գայլն ուշադրութեամբ լսում էր և տեղիցն անդամ չէր շարժուում: Չուլթակահարը նւագում էր և ամբողջ մարմնով դողդողում. ինչպէ՞ս և ինչո՞վ պաշտպանւէր, եթէ յանկարծ գայլը վրայ պրծնէր ու պատառոտէր իրան:

Չուլթակի երկու թելերն արգէն կտրւել էին, բայց նա շարունակում էր նւագը մնացած երկուսի վրայ:

Նւագի ձայնին եկան ուրիշ գայլեր ևս: Նրանք շրջապատել էին փոսը և սիրով լսում էին ջուլթակի ձայնը:

Չուլթակի մի թելն էլ կտրւեց: Մնացել է վերջին թելը: - Տէր Աստուած, գոնէ մինչև լոյս կարողանայի այսպէս զբաղեցնել գայլերին, մտածում էր խեղճը և շարունակում իր ճղզոյցը:


Բարեբաղդաբար շուտով վրայ հասան հովիւները և խեղճ ջուլթակահարին ազատեցին գայլերից:

Առուակ

Լերկ փարսեայուից մի վիհր առուակ
Բողբում է մեղմիկ խոխոզ հանելով
խոր շորերով անցնում են արագ
փրփրած ալիքներն արժարի փայլով:
Հառ-ազ է վազում փաղար շրուկով,
Ռաչրեր, արօրներ և մարգեր մրնում
Ու իլիւպով, վեր-վար ուսրնելով
Գարնան կենսարու գալուստն աւերում:

109. ԱՐԱԲԻ ՉԻՆ

Կուր ժամանակ թշնամիները գերի վերցրին մի արաբի: Նրա ձեռքերը ու ստքերը կապել էին, որ չը փախչի: Գերի էր ընկել նաև արաբի ձին:



Գիշերը ամենքը քնած էին, բայց արաբը արթուն էր: Նա մտածում էր իր կնոջ և երեխաների մասին: Յանկարծ նա լսեց ձիու խրխնջոյ:

Նա ճանաչեց. դա իր ձիու ձայնն էր: Սողալով գնաց, մօտեցաւ այն վրանին, որի ցցին կապել էին ձին: Մօտեցաւ և ասաց.

- Իմ ազնւու ձի, դու էլ ինձ պէս գերի ես, տանջւում ես: Բայց ես ուզում եմ, որ գոնէ դու ազատ լինես: Վերադարձիր մեր վրանը, գլուխդ ներս երկնցուր դռնէն և լիզիր երեխաներիս ձեռքերը...

Այս ասելով՝ արաբը ստամներով քանդեց իր ձիու ոտնակապերը: Չին ազատւեց, բայց չուզեց մենակ փախչիլ: Նա գլուխը ծսեց, հստատեց տիրոջը և հասկանալով, որ նա անկարող է հեծնել, իր ատամներով պինդ բռնեց նրա կաշէ գօտիից և փախաւ:

Չին հասաւ տիրոջ վրանը, վայր դրաւ նրան կնոջ և երեխաների առաջը, բայց սաստիկ յողնածուլիւնից անմիջապէս սատակեց:

Ազնիւ կենդանին սատակեց իր տիրոջ կեանքը փրկելու համար:

Աղած. Մի ձեռքը ծախի չի տայ:



110. ՆԱՊԱՍՏԱՍԿԻ ՏՈՒՆԸ

I.

ՆԱՊԱՍՏԱՍԿԻ ՈՒ ԱՂԷՍԸ



Անտառի մէջ բարձր տեղում,
Որտեղ քամին պար էր խաղում,
Նապաստակը տուն էր շինել
Ու աղւէսին դրկից եղել:

Տուն էր շինել, այն էլ փայտից,
Պաշտպանում էր տաքից-ցրտից:
Աղւէսինը թէև լայն էր,
Թէև երկու աչքանի էր,
Բայց շատ ցուրտ էր՝ ողջը ձիւնից,
Այդ էր եկել տիրոջ ձեռքից:
Բուք օրերին, ցուրտ ձմռանը,
Երբ վառում էր վառարանը,
Տան օձորքից ջուր էր մաղում
Եւ աղւէսը միջին լողում:
Մի օր եկաւ հալհրոցը,
Տունը առաւ կաթկըթոցը.
Դեռ չըհասած մարտի կէսը,
Անտուն մնաց մեր աղւէսը:
— Ոտքդ պաշեմ, այ Շահգաղէ,



Յրտի ձեռքից ինձ ազատէ,
Մի անկիւն տուր տանդ միջին,
Ծառայ արա բո առաջին:

Պօսք եմ տալիս, ես ամեն օր
Լւամ, կարեմ՝ բո հին ու նոր,
Եփեմ, թափեմ, քեզ ծառայեմ,
Տունդ, տեղդ կարգին պահեմ:
«Լաւ, ներս արի, դրկից աղւէս,
Բայց խնդրում եմ, ինձ հետ վարուես,
Կուր, ուշունց ես չեմ սիրում,
Հին բաներն էլ չեմ բրբրում»:
Ու աղւէսը մտաւ տունը,
Ճաշը կերաւ, առաւ բունը:
Քնից զարթնեց, դէս դէն նայեց,
Տան տիրոջը խիտ հայհոյեց.
— Այ փայլ տամ էդ բո գլխին.
Դուն տան տէրը, ես աղախին.
Տան մեծ մասը քեզի պէսին,
Դուն տակը խան աղւէսին:
Դէհ, դուրս կորի,
Ծուռ աչք շլտիկ,
Պոչ էլ չունի,
Սրան մտիկ:

II.

ՆԱՊԱՍՏԱՍԿԻ ՈՒ ԱՐՁԸ

Նսպաստակը իրանն առաւ,
Տունը թողեց ու դուրս թռաւ,
Յետ չընայեց, վագեց, լացեց,
Քեռուն գտաւ ցաւը պատմեց,
— Այ իմ քեռի, այ արջ ապէր,
Էն աղւէսը՝ չար սրտամեռ,



Փայտէ տունս ձեռքէս առաւ,
Դուռը փակեց, իրանն արաւ:
Քրոջ որդի, է, ամօթ չէ,
Որ դու կուլաս, բեռիդ սաղ չէ:
Արի գնանք, ես էն փչին
Մի լաւ դաս տամ տանը միջին:

Քրոջ որդին, քեւի արջը,
Մինն ետեր, մինն առաջը,
Եկան կանգնան տան դռանը,
Վառած գտան վառարանը:
Սրտոտ քեւին դուռը ծեծեց
Ու աղէսին հերսոտ կանչեց.
—Տօ, փուչ աղէս, ասա, ինչո՞ւ
Փայտէ տանը աէր ես դառել
Ու իրան էլ դուրս ես արել:
— Լաւ եմ արել,
Տէր եմ գառել.
Ձեռքէ գալիք
Մարդ խաբէլիք:
Դէհ, մի փքէք,
Դոնից չքէք:
Ու աղէսը դռան ծակից
Վառարանի թէժ կրակից
Բերեց ցանեց արջի վրան,
Մի լաւ խանձեց գունչն ու բերան:
Փախաւ արջը գունչը այրած,
Քրոջ որդին հետը առած:

III.

ՆԱԳԱՍՏԱԿՆ ՈՒ ԳՍՅԼԸ

Անտուն, անտէր նապաստակը
Գնաց նստեց ծառի տակը,
Մաղիկ-մաղիկ մղկրտալով,
Ցաւն էր պատմում բարձր լալով.
— Ինձ լաւ խաբեց կեղծաւորը,
Դուրսը թողեց էսպէս օրը.
Անտուն, անտէր ես ի՞նչ անեմ,
Մի տեղ չըկայ միջին քնեմ:
Լացը լսեց գայլը գանդաղ,
Եկաւ ասաց՝ «այ քեզ մատաղ,
Ինչի՞ կուլաս մաղիկ-մաղիկ,

Կտրատելով սիրտ ու աղիք»:
— Է՛ գայլ եղբայր, բանս բուրդ է,
Վրէս բարակ, օրը ցուրտ է.
Էն աղէսին թող չըմնայ,
Տանս միջին գրողի գայ:
Նապաստակը
Ծառի տակը
Լացեց, լացեց...
Սիրաւ բացեց:
— Դու քեզ խղճա՛, իմ նապաստակ...
Բայց մի կորցնի՛ գուր ժամանակ.



Գնանք ցոյց տուր էն աղէսին:
— Է, քիչ առաջ քեզ ի՞նչ ասին...
«Է, քիչ խօսի, վեր կաց գնանք,
Քո տան տեղը մի իմանանք.
Էն աղէսին ես մի քաշ տամ,
Մեզ երկուսիս մի լաւ ճաշ տամ»:
Գայլ, նապաստակ ընկան ճամփայ,
Եկան, եկան մին էլ ահա
Հասան՝
Տեսան
Մի վառ կրակ
Վրան կաթսան:

Ծեր աղւեսը գոգնոցն հագին,
 Վրէն մաքուր արգին-կարգին
 Դունդունալով ճաշ էր եփում,
 Շերփով խառնում, բեափը թափում:
 Կերակուրը իւղոտ-սոխոտ
 Հոտ էր բուրում. մի անուշ հոտ,
 Որ ծեր գայլին կալեց, կապեց,
 Ախորժակը խիստ գրգռեց:
 — Ինչ էլ լինի, ես աղւեսին,
 Բան չեմ ասի տանը մասին.
 Կերթամ մօտը, կ'ընկնեմ ոտը.
 Դէն աղւեսն էլ խօսի խամր չէ,
 Որ քաղցածին չըճանաչէ:
 Ասաց գայլը, չոքեց դռան,
 Բայց չըբացած լեզու, բերան,
 Աղւեսը այն
 Հա յարձակեց
 Գայլի վրան,
 Ճչաց, գոչեց
 Զիլ բարձրաձայն.
 — Կորիք, քու թան,
 Սև ցաւը ք'իզ.


Նապաստակի սյւշտպանին տես:
 Էդ Երբ առար վկայական,
 Դարձար գլխիս գէշ փաստաբան:
 — Մի բարկանայ, պարոն աղւես.
 Քո ցեղակից գայլիկն եմ ես.
 Նապաստակի հետ ի՞նչ ունեմ,
 Եկայ քեզ մօտ, որ ճաշ անեմ:
 — Խնդրեմ ներես ինձ, գայլ ախպէր,
 Զղային եմ ու սնհամբեր.
 — Ի՞նչ սպասի, ճաշը համնի,
 Բայց որպէսզի կրակը չանցնի,
 Խնդրեմ մի գաս՝ տակը փչես,
 Գիտեմ որ դու հոլարտ էլ չես:

Գայլը իսկոյն կրակը փչեց,
 Ու աղւեսը կաթսան շրջեց,
 Յիմար գայլի գլուխը խաշեց:
 Գայլը սաստիկ ոռնաց, գոռաց,
 Պոչի վրայ շատ Ֆրոֆրուաց,
 Գլխի ցաւից ելաւ թռաւ,
 Մի չորս ոտ էլ դեռ փոխ առաւ,
 Հազիւ իրան գցեց բունը,
 Հիւանդ պառկեց սաղ գարունը:

IV.

ՆԱՊԱՍՏԱԿԸ ՈՒ ԱՔԱՂԱՂԸ

Անտուն - անտէր նապաստակը
 Դարձեալ եկաւ ծառի տակը.
 Մաղիկ-մաղիկ մըղկտալով,
 Ցաւն էր պատմում
 Բարձր լալով:
 «Ինձ լաւ խաբեց կեղծուորը,
 Դուրսը թողեց էսպէս օրը.
 Անտուն, անտէր ես ի՞նչ անեմ
 Մի տեղ չըկայ միջին բնեմ»:



Զայնը լսեց աքաղաղը,
 Իսկոյն թողեց իրա խաղը,
 Վազեց՝ եկաւ ծառի տակը,
 Որտեղ կուլար նապաստակը:
 «Ինչի՞ կուլաս, այ իմ շտիկ,
 Մի վեր նայի, մի ինձ մտիկ.
 Հերիք ճմրես էդ աչերդ.
 Որ կուրանաս, ո՞վ է տէրդ.
 Մի լար, մի լար, չարդ տանեմ.
 Պատճառն ասա, մի ճար անեմ»:
 Նապաստակը աքաղաղին
 Պատմեց եղածն իրա տեղին:
 — Որ էդպէս է
 Մի սպուսէ,

Էլ մի տրզգա,
 Հետս վրզգա,
 Տան տէր դառի
 Ինձ մի վառի:
 — Մժեղի պէս նրան կտցեմ:
 Աղէտն ինչ է՝ հետը մրցեմ:
 Էնպէս գոռամ ձէնս փոխած,
 Որ չքոտը տունը թողած՝
 Էն մթնովը ելնի փախչի:
 Էս արջորն է՝ արջ ու գայլ չի:
 Մութը մութին,
 Ժամը ութին
 Արագ-արագ
 Առանց ճրագ
 Հերոսները
 Տունը հասան
 Ու անասան
 Քաջը գոչեց ձայնը փոխած,
 Ալ արիւնը աչքը կոխած:
 — Ես իշխանն եմ՝ Մեծ Վարդերես,
 Սուր եմ կախել հինգ գաղ ու կէս:
 Էլ չի պրծնի գող աղւէսը,
 Թէ որ գտնեմ նրան ներսը:
 — Այ, էս ո՞վ է Վարդերեսը:
 Դուռը բացեց խան աղւէսը
 Ու էն մթնով
 Իրպաւ գետնով,
 Լեղտպատա
 Ընկաւ անտառ:
 Աքաղաղն ու նապաստակը,
 Որ քաշում էր տան փափազը,
 Տուն ներս մտան, սեղան նստան,
 Հաշտ ու բարիչ լաւ ընթրեցին
 Ու էսպէս էլ միշտ ապրեցին:



111. ՕՂՆԿԱՆՈՐ ԵՂՋԵՐՈՒՆ



Մի անգամ թագաւորը որսի ծա-
 մանակ բռնեց մի եղջերու: Սարսափած
 կենդանին անշարժ կանգնեց թագա-
 ւորի առաջ: Դողալով ամբողջ մարմնով՝
 նա նայում էր թագաւորի աչքերին.
 նրա ոտները ծալոււմ էին երկիւղից,
 աչքերից կսմաց հոսում էին արցունք-
 ները: Թագաւորի սիրտը շարժեց և
 նա վճռեց եղջերւին չըզրկել կեանքից:
 Թագաւորը հրամայեց, որ եղջերւի պողին մի ոսկէ օղակ
 անցկացնեն, իսկ օղակի վրայ գրեն տարեթիւն ու իր
 անունը: Այնուհետեւ եղջերւին ազատ բաց թողին:
 Եղջերուն ուրախութեամբ կրկին վազեց անտառ,
 իսկ թագաւորը վերադարձաւ տուն: Նա շուտով հիւան-
 դացաւ ու մեռաւ: Նրան յաջորդեց իր որդին: Քիչ
 յետոյ նա էլ մեռաւ և գահ բարձրացաւ սրա որդին:
 Իսկ եղջերուն անվնաս ապրում էր անտառում:
 Մի անգամ նոր թագաւորը որսի գնաց այն իսկ ան-
 տառը, որտեղ իր պապը արձակել էր եղջերուն: Եւ ահա
 որսորդների առաջ կրկին երևաց նոյն եղջերուն: Նա
 բոլորովին ծերացել էր. նրա պողի վրայ փայլում էր
 ոսկեայ օղակը: Զարմացած նայում էր նրան երիտա-
 սարդ թագաւորը, մինչև որ օղակի գրութիւնը կարդաց
 և հասկացաւ բանի էութիւնը:
 Եւ երբ հաշւեցին, տեսան, որ օղակը անցկացնելուց
 յետոյ անցել էր ուղիղ յիսուն տարի:
 Եղջերուն յիսուն տարի խաղաղ ու երջանիկ ապրել
 էր անտառում, որովհետեւ թագաւորը խնայել էր նրա
 կեանքը:



112. ՏԱՆՏԻԿԻՆԸ ԿԱԹ ԿԹԵԼԻՍ

Մարան, Մարան,
Կուրծդ խարար,
Կրթեմ կաթդ
Վարան, վարան:

Մերեմ կաթդ՝
Մածուն շինեմ,
Որդուս առատ
Բաժին հանեմ:

Տեսնէ համը
Անուշ մածնիդ,
Որ լաւ պահէ
Քո շար հորթիդ:

Մարան, Մարան,
Կուրծդ խարար,
Տուր ինձ դու կաթ,
Վարան, վարան:



Ժառերն ու կայիներ

Ժառերն անբառու թշուր նեղայան
կայեր շտորիցը և էլ չիմայան ինչ անեն,
որ իրանց գլուխը պահեն: Արանի խոր
հուրդ արին, որ մի հնար գրեն:

- կայիներ ինչ է, որ մեկ կարողանայ
նեղայանը յաղթել ինչ մեծ բան է նա. —
այսպէս շայն քան թէ ժառերից մէկը:
- մեկ որ կոր չը քանի, կայիներ ինչ է,
որ յանդգնի անել մեկ կորոր-կորոր:

114. ԿԱՐԻՃՆ ՈՒ ԿՐԻԱՆ

Կարիճը ճանապարհ ընկաւ աշխարհ տեսնելու: Գնաց,
գնաց, մի մեծ գետի դէմ առաւ: Նա շատ վեր ու վայր
վազվզեց, բայց ոչ մի տեղից անցնելու հնարը չըգտաւ.
Ոչ կամուրջ կար և ոչ էլ գերան:
Խեղճը գետի ափին մնացել էր շարած: Կրիան տե-
սաւ կարիճի անելանելի դրութիւնը և կամեցաւ նրան
լաւութիւն անել:

Նա դուրս եկաւ ափը և ասաց. «Կարիճ եղբայր, տես-
նում եմ, որ դու լողալու ընդունակութիւն չունիս. արի,
մէջքիս նստիր, ես քեզ կանցկացնեմ գետի միւս կողմը»:
Կարիճն ուրախութիւնից չըղիտէր, ինչպէս յայտնէր
իր շնորհակալութիւնը կրիային:

Երկու բարեկամները նոր էին հասել գետի մէջ տեղը,
որ յանկարծ կարիճը նկատեց կրիայի գլուխը՝ դուրս ցրց-
լած ոսկրէ պատեանից: Նա մի քանի անգամ վեր ու
վար շարժեց իր երկար պոչը և ճարպիկութեամբ իր
թոյնը թափեց կրիայի սառն մարմնի մէջ:

Կրիան այդ անսպասելի հարւածից շրմամբ բարկու-
թեամբ բացականչեց. «Ապերախ բարեկամ, այդ ի՞նչ
ես անում. ես գետիկատաղի ալիքները պատառոտելով՝
քեզ մէջքիս վրայ դրած դէպի ափն եմ տանում, իսկ
դու թշնամաբար ինձ կծում ես»:

«Ընկեր, խնդրեմ չընեղանաս, պատասխանեց կարիճը
վերևից. ես ոչ մի թշնամութիւն չունեմ քո դէմ. կծե-
լը իմ սովորութիւնն է. ես կծում եմ թէ բարեկամիս և
թէ թշնամուս, որովհետև առանց կծելու չեմ կարող
ապրել»:

«Իէ, որ այդպէս է, բարկացած պատասխանեց
կրիան. — խնդրեմ դու էլ ինձանից չընեղանաս. ես էլ
ուզում եմ իմ սովորութիւնը բանեցնեմ. մնաս բարով...»:

Այս ասելով կրիան խորասուզեց գետի ալիքները
մէջ...»

115. Կ Ա Չ Ա Ղ Ա Կ

Այ չաչանակ
 Կաչաղակ,
 Սիրուն թռչնակ,
 Սարսարակ,
 Ի՞նչ ես ընկել դռնէդուռ,
 Բակ ու պարտէզ ու կտուր
 Եւ մտքումդ էլ ի՞նչ կայ.
 Քանի՜ ճրչաս
 Կըչ-կըչաս՝
 — Չըկայ-չըկայ,
 Չըկայ-չըկայ...

Մէկ էլ յանկարծ
 Չայրացած,
 Աւելի խիստ
 Անհանգիստ,
 Երկար պոչդ շարժելով,
 Ի՞նչ ես բացում կաուցդ
 Եւ վրդոված հոգուցդ
 Չայն ես տալի
 Վշտալի՝
 — Չըկայ-չէ-չէ,
 Չըկայ-չէ-չէ...

116. ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ազրիան թագաւորը մէկ անգամ զբօսնելիս պատահեց մի գառամեալ ծերունու, որ մի մատաղ խնձորենի էր տնկում և ասաց նրան.

- Եթէ երիտասարդութիւնդ անգործ անցկացրած չըլինէիր, այժմ ստիպւած չէիր լինի աշխատել:
- Մանկութիւնից սկսած ես ծոյլ չեմ եղել և մինչև ծերութիւնս էլ աշխատում եմ, որքան կարող եմ, պատասխանեց ծերունին: — Ասուած սիրում է աշխատանքը:
- Քանի՜ տարեկան ես, հարցրեց թագաւորը:
- Մօտ հարիւր, պատասխանեց նա:
- Ի՞նչ, բացականչեց Ազրիանը: — Եւ այդ հասակում դեռ ծառեր ես տնկում: Մի՞թէ միտք ունիս դրանց պատուհները վայելել:
- Յոյս ունիմ, պատասխանեց ծերունին: — Իսկ եթէ Ասուած ինձ չի կամենայ, ուրիշները կը վայելեն և շնորհակալ կը լինեն ինձանից: Չէ՞ որ ես էլ իմ հայրերի աշխատանքն եմ վայելել:

Այս պատասխանը դուր եկաւ թագաւորին:
 — Լաւ, ասաց նա: Եթէ դու բազմ կունենաս այս ծառի պտուղները քաղելու, իմաց տուր ինձ:

II.

Անցաւ մի քանի տարի: Ծերունին դեռ ապրում էր և շարունակում էր ինձամբել իր պարտէզը: Ծառը մեծացաւ, ծածկեց ծաղիկներով և վերջապէս զարդարեց պտուղներով:

Ծերունին բաղեց պտուղները, ընտրեց նրանցից ամենալաւերը, դարսեց զամբիւղի մէջ և տարաւ պալատը: Ազրիանը հեռուից նկատեց ծերունուն և հրամայեց ներս կանչել:

- Ի՞նչ ես կամենում, հարցրեց նա:
- Մի քանի տարի սրանից առաջ, ասաց ծերունին, դուք տեսաք մի ծերունու, որ ծառեր էր տնկում: Դուք այն ժամանակ ցանկութիւն յայտնեցիք, որ եթէ այդ ծերունուն յաջողւի քաղել ծառի պտուղները, ձեզ իմաց տրելի: Ես այն ծերունին եմ և ահա իմ աշխատանքիս պտուղները:

Թագաւորը սիրով ընդունեց պտուղները և մեծաբեց ծերունուն: Նա համոզեց, որ պէտք է աշխատել մինչև խորին ծերութիւնը և երբէք չը յուսահատուել...

Ասած. Ով պարի, ոչ դալարի:



117. ՇՈՒՆՆ ՈՒ ՁԻՆ

Օրերից մի օր Բողարը գոմում

Սկսեց փանել, անպատել ձիուն.

—Մի հարցնող լինի, թէ ինչ ես անում,

Որ գարու գլխին զուր քար ես գցում:

Ի՞նչ մի մեծ բան է հերկել, սայլ քաշել.

Ուրիշ հունարդ ես չեմ էլ լսել:

Այ, իմ արածը ուրիշ է իսպառ,

Ես անգին գանձ եմ աղայի համար.

Ցերեկը դաշտում հօտն եմ հսկում,

Գիշերը անքուն տունը պահպանում:

—Շատ ճշմարիտ է, ձին պատասխանեց.

Արածդ գիտեմ, շատ քաջ ես, ապրես.

Բայց մի մոռանար. տանը, թէ դաշտում

Իմ աշխատանքն ես հսկում, պահպանում:

118. ԳՍԻՈՐ ԳՍԲՐԻԷԼԸ

1.

Վաղ ժամանակ սպրում էր մեր երկրում մի անբախտ մարդ: Անբախտ եմ ասում ես նրան համար, որ էս խեղճի մէկը երկու չէր դառնում, որդիներն էլ մեռնում էին:

Մէկ օր էլ սրա կինը մի նոր որդի ունեցաւ:

—Այ մարդ, ասաց կինը, գուցէ սրա վրայ անէծք կայ. գնա հեռու աշխարհ, մի բարի ու արդար մարդ գտիր, բեր մեր երեխան մկրտի, գուցէ Աստծու ողորմութիւնը հասնի ու նրա ձեռքով էլ մեր որդին ազատւի չարից:

—Լաւ ես ասում, ա կնիկ, ասաց մարդը. դէ բեր, մի հաց տուր, ճամփայ ընկնեմ:

Էս մարդը մի հաց գրաւ փեշումը, Աստծու անունը տւաւ ու ճամփայ ընկաւ գնաց:

Մարդը գնաց, գնաց, մէկ էլ մի շահէլ ճաճորդի պատահեց:

—Բարի աջողում:

—Աստծու բարին:

—Էդ ո՞ւր էդպէս, այ բիճա, հարցրեց երիտասարդը:

—Ես գնում եմ երեխայիս համար մի քաւոր ճարեմ, ու սկսեց սրան մին-մին պատմել իր վիճակը:

—Երբ որ էդպէս է, բիճա, եկ էլ ճամփէդ մի երկարացնի, յետ դառնանք էստեղից, ես քեզ քաւոր կը լինեմ:

—Բայց դու ո՞վ ես, հարցրեց գիւղացին:

Ուզում ես իմանալ՝ իմացիր. ես Գարրիէլ հրեշտակապետն եմ, լսած կըլինես իմ անունը:

—Հա՛ն, այ, ինչ եմ ասում. քեզ քաւոր կանեմ, դու արդար մարդ ես, երկերեսութիւն չըգիտես, բոլորի հոգին էլ առնում ես՝ ոչ հարուստ ես հարցնում, ոչ աղքատ:

Գարրիէլ հրեշտակապետն ու գիւղացին գալիս են տուն: Տանը ինչպէս որ կարգն է, մի լաւ կնունք են անում, երեխային մկրտում ու Գարրիէլն էլ դառնում է նրանց քաւորը:

II.

Երբ կնունքը վերջանում է, հացն էլ ուտում, պրծնում են, գիւղացին ասում է.

—Քաւոր Գարրիէլ, մենք բարեկամ մարդիկ ենք, իմ պակասութիւնս էլ քոնն է. մի հնարք արա, գործերս մի բիշ յաջողեցրու, որ կարողանամ տուն տեղ պահել, ապրուստ անել:

Գարրիէլը թէ, լաւ. հէնց վաղւանից ես կըհիւանդացնեմ մի հարուստ մարդու. դու մի քիչ մոխիր կը լցնես ջրի մէջ, կը խմացնես, և կառողջանայ: Հէնց որ ներս կը մտնես հիւանդին տեսնելու՝ ես կերևամ քեզ. եթէ նստած լինեմ հիւանդի ոտների տակ, ասա, որ կարող ես լաւացնել. իսկ եթէ տեսար գլխատակին եմ, կը նշանակի որ նրա ժամանակը հասել է, պէտք է հոգին

առնեմ, էլ մօտ չը դաս:

Միւս օրը թագաւորը յայտնեց, թէ քաշովը մին ոսկի կը տայ նրան, ով կարողանայ իր աղջկանը առողջացնի:

Էս որ լսում է Գաբրիէլի սանահէր գիւղացին, վեր է կենում, մի հաց փեշումը զնում, մի քիչ մոխիր էլ թղթով գրպանը, ու ճամփայ ընկնում ուղիդ դէպի թագաւորի պալատը: Նազիր վեղերները կարծում են, թէ սա աղքատ մարդ է, եկել է ողորմութիւն խնդրելու. բերում են որ բաժին տան, բայց գիւղացին չի ընդունում:

— Ես աղքատ չեմ, ես բժիշկ եմ, գնացէք թագաւորին յայտնեցէք, որ ես եկել եմ նրա աղջկանը բժշկելու:

Ճարահատուած՝ գալիս, յայտնում են թագաւորին: Թագաւորը մին ուրախանում, մին էլ բարկանում է.

— Ա՛յ գիւղացի, ասում է, բեզ պէս շատերն են եկել, յոյս տւել, բայց ոչինչ չեն կարողացել անել ու գլխները կախ հեռացել են: Հիմա բեզ էլ մի պայմանով կը թողնեմ. թէ աղջկաս լաւացրիր, հօ լաւ՝ կը տամ ինչ որ ուզես, թէ չէ՝ իմացած եղիր, որ վերջդ հասել է:

— Շատ լաւ, թագաւորն ապրած կենայ, միայն թէ խնդրում եմ ինձ ներս թողէք մի րոպէ, նայեմ հիւանդին, յետոյ կասեմ, կառողջանայ, թէ ոչ:

Գիւղացուն ներս են թողնում: Սա տեսնում է, որ իր քաւոր Գաբրիէլը նստած է թագաւորի աղջկայ ոտների տակ: Չան, մտածում է գիւղացին ինքն իրան:

— Կարող եմ, թագաւորն ապրած կենայ, կարող եմ լաւացնել:

Իսկոյն հեռացնում է բոլորին հիւանդի սենեակից, հանում է նախօրօք հետը վերցրած մոխիրը, մի բաժակի մէջ ջրով խառնում է ու տալիս հիւանդին:

Գաբրիէլը ժպտալով վեր է կենում հեռանում ու թագաւորի աղջիկը առողջանում է:

Գիւղացուն շատ ընծաներ են տալիս:

Այնուհետև էլ օր չէր անցնում, որ մի նշանաւոր մարդ չը հիւանդանար:

Կարճ ժամանակում սա իրան կարգին ուղղեց, հարստացաւ. տուն ու տեղի, ապրուստի տէր դառաւ:

— Հը, սանահէր, քէֆդ ճնց է հիմա, գճճ ես վիճակիցդ:

— Շատ շնորհակալ եմ, քաւոր Գաբրիէլ, շատ, ամեն ինչս լաւ է, քս լաւութիւնդ մտանալու բան չի... միայն՝ մէկ ուզում եմ մի բան էլ հարցնեմ, մէկ էլ վախենում եմ, թէ ճիշտը չես ասի:

— Ասա, տեսնեմ ի՞նչ է ինդիրդ:

— Քաւոր Գաբրիէլ, դու էդ ճնց ես ճանաչում բոլոր մարդկանց, ճնց ես միտդ պահում, թէ նրանցից որի ժամանակը երբ է լրանում, որ գնաս հողին առնես:

— Ինչու չի լինի. դէ որ ուզում ես իմանալ, էգուց ինձ հետ եկ, տանեմ ցոյց տամ:

Միւս օրը սա քաւոր Գաբրիէլի հետ վեր է կենում գնում: Էլ չըզիտէ ուր են գնում, ուր չեն գնում, միայն մէկ էլ էն է տեսնում, որ մի մեծ տան մէջ են: Էդ տան մէջ իրար կողքի կարգով շարւած են բազմաթիւ վառւած իւղածրագներ պատրոյգներով: Իւղերի քանակութիւնը ճրագների մէջ զանազան է, լոյսերն էլ նոյնպէս: Մինը վառւում է շատ պայծառ, մինը՝ աղօտ, մինը՝ հազիւհազ, չորրորդը՝ հանգչելու վրայ է. ու էսպէս անվերջ, անհամար:

— Տեսնում ե՞ս, սանահէր, էս տունն ինձ է յանձնւած, ես եմ հսկում, սրանք էլ, էս ճրագները մարդկանց կեանքերն են. սրանք են ցոյց տալիս, թէ որի հողին երբ պէտք է առնեմ: Ա՛յ, էս լաւ վառողը մի հարուստի կեանք է, իւզ էլ կայ բաւական, կապրի էլի մի 20, 25 տարի: Սա, մի աղքատի կեանք է, թէև իւզ կայ, բայց վառւում է գժւարութեամբ - չքաւոր է:

— Քաւոր ջան, քաւոր, ի՞նչ կըլինի իմն էլ ցոյց տան...

VI.

Գաբրիէլը ցոյց տուաւ մի անկիւնում վառւող սանահօր կեանքի ճրագը:

Գիւղացին տեսաւ, որ քիչ է մնացել. սիրան անընկաւ.

— Քաւոր, ի՞նչ կլինի որ մի քիչ իւղ աւելացնես իմ ճրագին, բա մեր բարեկամութիւնը ո՞ր օրւայ համար է:

— Ո՛չ, ո՛չ, անկարելի է, ես այդ չեմ կարող անել: Այսքանը միայն կասեմ, որ դու հինգ տարւայ կեանք ունես:

Մարդը վերադառնում է տուն փոքր փոշման, հացն ու շուրը մտքիցն ընկնում են, բայց կեանքի հինգ տարին չի ընկնում:

Հինգ տարին կամաց կամաց քչանում էր. մի օր էլ լրացաւ, ու երևաց քաւոր Գաբրիէլը:

Սանահէրը սկսեց աղաչել, պաղատել, որ մի քանի օր ժամանակ տայ գործերը կարգի բերելու համար, բայց չեղաւ:

Գիւղացին տեսնելով, որ այդ հնարքները չեն օգնում, ասաց.

Դէ, քաւոր Գաբրիէլ, տեսնում եմ որ վերջին օրս է. էհ, մահկանացու մարդ ենք եղել, հազար ու մի մեղքեր ունենք, թող գոնէ վերջին անգամ աղօթեմ Աստծուն ու յետոյ առ հոգիս:

— Այ, դրան ինչ ասեմ, խնդիրդ իրաւացի է, աղօթիր, ես քեզ աղօթելու ժամանակ կրտամ:

Երդէիր Աստծու անունով, որ մինչև «Հայր-մերը» չըվերջացնեմ՝ հոգիս չառնես:

— Երդու՞մ եմ, ասաց Գաբրիէլը:

Սանահօր ղէմքը զւարթացաւ:

Ուրախ-ուրախ խաչակիւքեց երեսը ու բարձր ձայնով սկսեց. «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղեցի»... ու լռեց:

Դէ, շուտ արա սանահէր, ժամանակն անցնում է, աղօթքդ վերջացրու, յիշեցրեց Գաբրիէլը:

— Քէֆս չի՞, էլ չեմ ասում, էն մնացած կէսն էլ երբ որ քէֆս կտայ, էն ժամանակը կասեմ, դու հօ խոստացել ես՝ մինչև չըվերջացնեմ «Հայր մերը» հոգիս չառնես:

— Վայ, քո տունդ քանդւի, շրւարում է Գաբրիէլը. էս ինչ փորձանք բերիր զլուխս:

Վեր է կենում հեռանում: Տարիներ են անցնում, անհաշիւ տարիներ, Գաբրիէլը բանն ու գործը թողած, հեռուում է սանահէր գիւղացուն, որ մի կերպով ասել տայ «Հայր մերը», բայց հնար չի գտնում:

V.

Մի օր էլ էս գիւղացին անցնում է մի գիւղի մօտով, տեսնում է մի երեխայ էնպէս սրտակտուր, լաց է լինում, որ սիրան ուզում է թէ բերանովը դուրս գայ: Մօտենում հարցնում է, թէ ինչո՞ւ է լաց լինում:— Դասս չէի իմանում, սկսում է երեխան, վարժապետը ծեծեց, դուրս արաւ դպրոցից, թէ մինչև չըսովորես, չըգաս. տանից էլ հայրս ծեծեց, դուրս արաւ, որ չեմ սովորել:


— Ո՞րն է դասդ:

— Հայր-մերը ..

— Լաց մի լինի, բալա ջան, ես քեզ կը սովորեցնեմ, ասում է գիւղացին ու սկսում է սերտել տալ երեխային դասը: Զարմանում է թէ ի՞նչպէս շուտ սովորում է երեխան. մի երկու րոպէ չանցած հասնում են վերջին, և հէնց որ գիւղացին վերջացնում է... «և փառք յաւիտեանս ամէն.» քաւոր Գաբրիէլը ծիծաղելով վեր է կենում երեխայի տեղից:

— Հ՛ր, սանահէր, հիմա հօ վերջացրիր աղօթքդ...

Սանահօր լեզուն կապ ընկաւ, ու էն կապ ընկնելն է...



119. ԷՇՆ ՈՒ ԱՌԻԻԾԸ


Աղւէսն ասաւ. «Էշ բեռի,
 Ի՞նչ ես բռնել վերվերի»:
 Էշը թէ՛ - սուս, մեր տղայ,
 Ես որ մօրից նոր եղայ...
 Մի տեսնես զու առիւծին,
 Ես Էնչ գիտեմ քանի ծին,
 Հիւանդ ընկել է այրում,
 Վերջին օրերն է համրում:
 Ո՛վ անցնում է մօտովը
 Կամ պողովը, ոտովը...
 «Քեռի, դ՞ու էլ խփեցիր,
 Դ՞ու էլ հերսդ թափեցիր»:
 - Բա կարծում ես մնացի...
 Ես էլ նրան մի քացի...

Առած. Իշին նարուսիք կանչեցին. ասաց. «Կամ ջուրը պակաս
 կլինի, կամ փայտը»:

120. ՄԻ ԿԱՐԱՍ ՈՍԿԻ

I.

Ժամանակով մի աղքատ գիւղացի է եղել. զարնան
 վար ու ցանքսի ժամանակ եղ չունէր, որ արտը վարէր,
 այդ պատճառով իր հողը վար-
 ձով տւեց հարևանին:



Հարևանը արտը վարելիս,
 տեսնում է, որ խոփը մի կոշտ
 բանի է դէմ առել: Հողը դէն է
 տալիս և գտնում է մի կարաս
 ոսկի: Եղները արտի մէջ թող-

նելով, ինքը վագում է հարևանի մօտ և ասում:

- Աչքդ լոյս, գրացի եղբայր, հողիդ միջէն մի կա-
 րաս ոսկի դուրս եկաւ, արի տէր եղիր ապրանքիդ:

- Չէ, եղբայր, այդ ոսկին իմը չէ. արտիս վարձը
 դու ես տւել, ոսկին էլ բեզ է պատկանում:

Դրացիներն սկսում են վիճել, չեն համաձայնում.
 վերջը գնում են այդ երկրի իշխանի մօտ գանգատի:

Իշխանը ուզեցնելով տէր դառնալ ոսկուն, ասում է,
 - ոսկին ոչ մէկիդ էլ չի պատկանում. ես եմ հողի տէրը,
 ոսկին էլ իմն է:

Վերցնելով իր մարդկանց, նա գնում է ոսկին բե-
 րելու. Գնում է, բայց ով զարմանք, տեսնում է մի կա-
 րաս՝ մէջը լիքը օձեր:

II

Իշխանը հրամայում է պատժել խաբեբայ գիւղա-
 ցիներին: Խեղճերը սկսում են աղաչել. իշխանը ապրած
 կենայ, օձ չըկայ այնտեղ, ոսկի է, ոսկի...

Իշխանը նորից մարդ է ուղարկում, որ ստուգէ:
 Մարդը լուր է բերում, թէ իրաւ որ ոսկի է:

Իշխանն ինքն է գնում մի անգամ էլ և առաջւայ
 պէս կարասի մէջ օձեր է տեսնում:

Իշխանը խիստ զարմանում է. կանչում է իր երկրի
 իմաստուններին, որ նրանք բացաղրեն իրան:

Իմաստուններն ասում են. «Կարասով ոսկին աղ-
 քատ գիւղացիներինն է, այդ պատճառով նրանք ոսկի
 են տեսնում: Բայց որովհետև դու գնում ես նրանց
 ձեռքից խլելու, բեզ օձ է երևում»:

Իշխանը գտնում է, որ իմաստունների խօսքը
 ճշմարիտ է և ասում է գիւղացիներին.

- Դէ այժմ գնացէք, տէր եղէք ձեր ոսկուն և երկու
 եղբոր պէս հաւասար բաժանեցէք ձեր մէջը:



121. ԺԱՄԿՈՉԸ ԵՒ ՈՒԽՏԱՒՈՐԸ

I.

Օրւան մէկը կեռ պոչ շունը
 Իր տիրոջից նեղացած՝
 Մտքում զրեց տանից փախչել՝
 Աղ ու հացը մոռացած:
 Բայց արի տես՝ ընկեր գտաւ.
 Մեր շատախօս աքլորին,
 Դրին, վերցրին, խօսք մէկ արին,
 Ճամփայ ընկան միասին:

II.

Քրտինք մտած աքլոր ու շուն՝
 Սար ու ձորեր կտրեցին,
 Իրիկնադէմ յոգնած, դադրած՝
 Մի վանքի մօտ կանգնեցին:
 Է՛հ, հերիք է, խնամի աքլոր,
 Պօսեց շունը բեղարած.
 Արի քնենք, որ վաղ զարթնենք՝
 Լուս ու մութը չը բացւած:
 Էս խօսքի հետ աքլորն ելաւ,
 Թառեց վանքի կառուրին,
 Շունն էլ մեկնեց չորս թաթերը
 Վանքի դռան մեծ քարին:

III.

Ճամփորդները աչքը ծէգին՝
 Գիշերն անցրին կիսաքուն,
 Լուսադէմին աքլորն ելաւ
 Կանչեց իրա կուկրիկուն:
 Որտեղից էր, էդ շար ժամին
 Ձէնը լսեց մի աղւէս
 Ու էդ ձէնին ուրախ-ուրախ

Մեր աքլորին եկաւ տես:
 — Բարի լոյս քեզ, բաւոր աքլոր,
 Աղւէսն սկսեց բղաւել.
 Խնդրեմ ցած եկ ու դուռը բաց,
 Վանքում կուզեմ աղօթել:
 — Բարով եկար, սանհէր աղւէս,
 Աչքիս վրայ տեղ ունիս.
 Գալդ բարի, աքլորն ասեց,
 Էս ճրտեղից ես գալիս.
 Բայց խնդրում եմ, դռան կշտին
 Մեր ժամկոչին տես, ասա,
 Որ շտապի ու քեզ համար
 Վանքի դռները բանայ...

IV.

Ուխտաւորը ուրախ-ուրախ
 Դէպի դուռը շրակեց,
 Բայց երբ յանկարծ շանը տեսաւ,
 Ոտքերը տակը ծալեց:
 Իսկ Բօզարը տեղից թռաւ,
 Վրայ հասաւ աղւէսին,
 Պոչից բռնեց, բերանն առաւ
 Սև ուխտ բերեց իր գլխին:
 Շունչը կտրած, կաղի տալով,
 Աղւէսն հագիւ ազատւած
 Արագ-արագ վազվզելով՝
 Ինքը իրան փրնթփրնթաց.
 — Քանի վանքը էսպէս ժամկոչ
 Իր բռան մօտ կրպահի,
 Ատուած վկայ՝ նա իր օրում
 Էլ ուխտաւոր չի տեսնի...



1.

Եղել է մէկ մարդ, շատ հարուստ, ունևոր: Նա ծուռ ու մուռ ապրելով, ինչ ունէր չունէր կերաւ, նրստեց դատարկ: Տնից հացը կտրւեց. մէկ ձեռքը դրեց ծոցը, մէկ ձեռքը երեսին, չէր իմանում, թէ ինչ անի: Ախ ու վախ անելով, հալւում մաշւում էր:

Բարեկամներն եկան, գլխին հաւաքւեցին և նրանցից ծերն ասաց. «Իու մեղք էս գործել, քո բաղդը բեզանից խրտնել, փախել է. վեր կաց, գնա քո բաղդի յետևից, գուցէ էլի գտնես և առաջւայ պէս բախտաւոր լինես»:

Մարդը գլխի ընկաւ, վեր կացաւ սար ու քար ընկաւ, գիշեր ցերեկ իր բաղդը փնտրեց: Մի գիշեր երազում տեսաւ, որ իր բաղդը բարձր սարի վրայ՝ գլուխը ծռած, նստած է և նա էլ անի ու վախ է անում: Զարթնելով՝ այն սարի ճանապարհը բռնեց:



Ճանապարհին մի առիւծ տեսաւ: Առիւծը մարդուն կանչեց և հարցրեց. «Ո՞ւր ես գնում»: Մարդն ասաց. «Գնում եմ բաղդս գտնեմ»: Առիւծն ասաց «Ես գիտեմ, որ քո բաղդը

շատ գիտուն է. նրանից հարցրու, ես ինչնով եմ հիւանդ. ահա եօթը տարի է չարչարում եմ»: Մարդը խօսք տւեց, գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ մի այգի, որ հազար տեսակ պտուղներով լիքն էր. քանի քաղեց որ ուտի, տեսաւ լեղի են: Այգու տէրը նշմարեց, այս մարդու վրայ բարկացաւ, յետոյ հարցրեց. «Ո՞ւր ես գնում»: Մարդն իր ցաւը պատմեց այգու տիրոջը: «Դէ, թէ որ այգպէս է, քո բաղդից հարցրու, ի՞նչու իմ այգու

պտուղները միշտ դառն են մնում»: Մարդը խօսք տւեց, գնաց:

Գնաց, գնաց, հասաւ մէկ շէն, շքեղ բերդի. մտաւ մէջը, տեսաւ, որ մի սիրուն աղջիկ պալատի մէջ ման է գալիս: Նա այս մարդուն հարցրեց. «Եղբայր, դու այստեղ ի՞նչ բան ունիս»: Մարդն իր գլխի անցածը պատմեց:

Աղջիկն ասաց նրան. «Ես շատ գանձ, հարստութիւն ունիմ, բայց մի ցաւ գիշեր ցերեկ տանջում է ինձ: Թէ որ քո բաղդից ինձ համար մի ճար հարցնես, ամեն տեսակ բարութիւն կանեմ քեզ»: Մարդը խօսք տւեց, գնաց:

Գնաց և տեսաւ, որ իր բաղդը սարի գլխին նստել է: Բարև տւեց, նստեց. շատ գանգատ արեց, վերջը ապսպրած բաների ճարը հարցրեց, ամենի պատասխան էլ առաւ:

Դէ, հիմի վեր կաց, գնանք, ասաց մարդը:
— Իու առաջ գնա, ես էլ կը գամ, ասաց բաղդը:

II.

Մարդը դարձաւ, առաջ այն աղջկան տեսաւ, ասաց. «Քո դեղն այն է, որ դու մէկ կտրիճի հետ ամուսնանաս, քո վիշտն ու ցաւը կանցնին»:

Եկաւ այգին, տիրոջը կանչեց և ասաց. «Որ առւից որ այգու ջուրը գալիս է, այն առւի մէջ ոսկու հանք կայ, ոսկու փշրանքը ջրի հետ գալիս են, ծառերը ծծում են, դառնանում են: Կամ ջրի առուն փոխիր, կամ հա՛քք փորիր, ոսկին: դուրս հանիր, և պտուղները կանուշանան»:

Մարդն եկաւ առիւծի մօտ և պատմեց իր տեսածները: Աղջիկը բեզ լաւութիւն չարեց Մարդն ասաց. «Ինչպէս չէ, ասաց, — արի, դու ինձ ան, նստենք մէկ տեղ Աստծու բարութիւնը վայելենք: — Ես համաձայն չեղայ: Միթէ ձեռք ու ոտքս կապէի և մի աղջկայ հոգսը քաշէի»:

«Այգու տէրն ի՞նչ լաւութիւն արեց»: Մարդն ասաց. «Այգու տէրը ոսկու հանքերը փորեց, դեղին ոսկի հանեց, ինձ տւեց: Ես չառայ, ասացի. «Ո՞վ այգքան բանը կը-

շալակէ և տուն կրտանէ»:

— Է՛, ասաց առիւծը, ինձ համար ի՞նչ դեղ ասաց: Քեդ համար էլ ասաց, որ եթէ մէկ անխելք մարդու գլուխն ուտես, կըլաւանաս, պատասխանեց մարդը:

Առիւծը սրա ասածները օրինաւոր կերպով կշռեց, թաթը պարզեց, մարդու գլուխը բռնեց, գետնով տւեց ու կերաւ:

— Ես ու իմ Աստուած, քեզանից էլ անխելք մարդ այս աշխարհում չեմ գտնի, ասաց նա ինքն իրան:

123. ՏԷՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

I.

Աստուած բարի տայ ձեզ էլ, երկու ախպօրն էլ: Լինում են չեն լինում, երկու աղքատ ախպէր են լինում: Մտածում են ի՞նչ անեն, ի՞նչ անեն, որ իրանց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնայ, մեծը գնայ մի ունևորի ծառայ մտնի, ոռճիկ ստանայ, տուն ուղարկէ:

Էսպէս էլ մեծը վեր է կենում, գնում է մի հարուստի մօտ ծառայ մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին էլ գարնան կկւի ձէն ածելը: Էս հարուստը մի չըլաւած պայման է դնում ծառային: Ասում է՝ «մինչև էն ժամանակը թէ դու բարկանաս՝ դու հազար մանէթ տուգանք տաս ինձ, թէ ես բարկանամ՝ ես տամ»:

Ես որ հազար մանէթ չունեմ՝ որտեղից տամ, ասում է ծառան:

— Բան չըկայ, փոխարէնը ինձ տասը տարի ձրի կը ծառայես:

Տղէն մին վախենում է էս պայմանից, մին էլ մտածում է թէ ի՞նչ պէտք է պատահի: Ինչ ուզում են անեն, ես եմ ու չեմ բարկանայ, պրծաւ գնաց:

Ասում է լաւ, համաձայն եմ: Պայմանը կապում են ու մտնում է ծառայութեան:

II.

Միւս օրը վաղ՝ տէրը վեր է կացնում ծառային, ուղարկում է արտը հնձելու:

— Գնա, ասում է, քանի լոյս է՝ հնձի, որ մութն ընկնի, կըգաս:

Ծառան գնում է, ամբողջ օրը հնձում, իրիկունը յոգնած գալիս է տուն: Տէրը հարցնում է.

Էդ ուր եկար:

Դէ, արևը մէր մտաւ, ես էլ եկայ:

— Չէ, էդպէս չէ: Ես քեզ ասել եմ՝ քանի լոյս է՝ պէտք է հնձես: Արևը մէր մտաւ, բայց տես, նրա ախպէր լուսնեակը դուրս եկաւ: Սա ի՞նչ պակաս է լոյս տալիս...

— Էդ ի՞նչ կըլինի... զարմանում է ծառան:

Հը՞, դու արդէն բարկանում ես, հարցնում է տէրը:

— Չէ, չեմ բարկանում... ես միայն ասում էի՝ յոգնած եմ... Մի քիչ հանգստանամ... կըկըզում է վախեցած ծառան ու գնում է նորից հնձելու:

Հնձում է, հնձում, մինչև լուսնեակը մէր է մտնում: Բայց լուսնեակը մէր է մտնում թէ չէ, դարձեալ արեգակն է դուրս գալիս: Ծառան ուժասպառ արտում վեր է ընկնում:

— Վայ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տւած ոռճիկն էլ... սկսում է հայհոյել յուսահատաւած:

— Հը՞, դու բարկանում ես, կանգնում է գլխին հարուստը: Երբ որ բարկանում ես, մեր պայմանը պայման է:

Ու պայմանի ուժով ստիպում է, որ ծառան կամ հազար մանէթ տուգանք տայ, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում է կրակի մէջ: Հազար մանէթ չունէր, թէ տար, հոգին ազատ անէր, տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելը անկարելի բան էր: Միտք է անում, միտք, վերջը հազար մանէթի պարտամուրհակ է տալիս հարուստին, դառն ու զատարկ վերադառնում տուն:

Հը՞, ի՞նչ արիւր, հարցնում է փոքր ախպէրը: Ու մեծ ախպէրը նստում է, գլուխն եկածը պատմում, ինչպէս որ պատահել էր:

Բան չըկայ, ասում է փոքրը, դարդ մի անի. դու տանը կաց, հիմի էլ ես գնամ:

Վեր է կենում, հիմի էլ փոքր ախպէրն է գնում, ծառայ մտնում նոյն հարուստի մօտ:

Հարուստը դարձեալ ժամանակը որոշում է մինչև կկլի ձէն ածելը ու պայման է դնում, որ եթէ ծառան բարկանայ, հազար մանէթ տուգանք տայ կամ տասը տարի ձրի ծառայի, թէ ինքը բարկանայ, հազար մանէթ տայ ու էն օրից էլ ծառան ազատ է:

—Չէ, էդ քիչ է. հակառակում է տղէն: Թէ դու բարկանաս, դու ինձ էրկու հազար մանէթ տաս. թէ ես բարկանամ, ես քեզ երկու հազար մանէթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ:

Էաւ, ուրախանում է հարուստը: Պայմանը կապում են ու այժմ էլ փոքր ախպէրն է մտնում ծառայութեան:

Առաւօտը լուսանում է, էս ծառան վեր չի կենում տեղիցը: Տէրը դուրս է գնում, տուն է գալիս, էս ծառան դեռ քնած է:

—Ս, տղայ, դէ վեր կաց է, օրը ճաշ դառաւ:

Հը՞, բարկանում ես դու... գլուխը վեր է քաշում ծառան:

Չէ, չեմ բարկանում, վախեցած պատասխանում է տէրը. միայն ասում եմ՝ պէտք է արտը գնանք հնձելու:

—Հա, որ էդ ես ասում, ոչինչ, կըգնանք, ինչ ես վրադում:

Վերջապէս ծառան վեր է կենում, սկսում է արեխները հագնել: Տէրը դուրս է գնում, ներս է գալիս, սա դեռ արեխները հագնում է:

—Ս, տղայ, դէ շուտ արա, հագի է...

—Հը՞, հօ չե՞ս բարկանում:

—Չէ, ո՞վ է բարկանում, ես միայն ուզում էի ասել՝

ուշանում ենք...

—Հա, էդ ուրիշ բան է, թէ չէ պայմանը պայման է: Մինչև ծառան արեխները հագնում է, մինչև արտն են գնում, ճաշ է դառնում:

—Էլ ինչ հնձելու ժամանակ է, ասում է ծառան. տեսնում ես՝ ամենքն էլ ճաշում են. մենք էլ մեր ճաշն ուտենք՝ յետոյ:

Նստում են, ճաշը ուտում: Ճաշից յետոյ էլ ասում է՝ «մշակ մարդիկ ենք, պէտք է մի քիչ քնենք հանգստանանք՝ թէ չէ»: Գլուխը կոխում է խոտերի մէջն ու քնում մինչև իրիկուն:

—Տօ, վեր կաց է, մթնեց է, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... Վայ բու դէսը զրկողի վիզը կոտրի, վայ բու կերածն էլ հարամ ըլի, քո արածն էլ... էս ինչ կրակի մէջ ընկայ... սկսում է գորգոռալ յուսահատւած աէրը:

—Հը՞, չըլինի՞ թէ բարկանում ես, գլուխը վեր է քաշում ծառան:

Չէ, ո՞վ է բարկանում, ես ասում էի թէ՛ մթնել է. տուն գնալու ժամանակն է:

—Հա, էդ ուրիշ բան է, գնանք, թէ չէ հօ մեր պայմանը գիտես. վայ նրա մեղքը, ո՞վ բարկացաւ:

Գալիս են տուն: Տեսնում են, հիւր է եկել:

Ծառային զրկում է թէ՛ գնա ոչխար մորթի:

—Ո՞րը:

—Որը կըպատահի:

Ծառան գնում է: Մի քիչ յետոյ լուր են բերում հարուստին, թէ հասի, որ քո ծառան ամբողջ հօտդ կոտորեց: էս հարուստը վազում է, տեսնում է՝ ճիշտ որ, ինչ ոչխար ունի, բոլորը ծառան մորթել է: Գլխին տալիս է, զոռում:

— էս ի՞նչ ես արել, այ անասուած, քո տունդ քանդելի, ինչի իմ տունը քանդեցիր...

IV.

Հարուստը մտածում է՝ ինչ անի, սնց անի, որ էս ծառայիցն ազատուի: Պայման է կապել մինչև մին էլ գար-

նան կկեր ձէն ածելը, ա՛յն ինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ ռըտեղ են գարունն ու կկուն...

Միտք է անում միտք, մի հնար է մտածում: Կնոջը տանում է անտառում մի ծառի վրայ հանում ու պատ-
ւիրում, որ «կուկու» կանչի: Ինքը գալիս է ծառային տանում թէ՛ արի գնանք անտառը որսի: Հէնց անտառն են մտնում թէ չէ, կինը ծառի վրայից կանչում է— «կու-
կու, կուկու»...

— Հը՛, աչքդ լուս, ասում է ծառային տէրը. կկուն կանչեց, ժամանակդ լրացաւ...

Տղէն գլխի է ընկնում տիրոջ խորամանկութիւնը:
— Չէ, ասում է, ով է լսել որ տարու էս եղանակին, ձմեռայ կիսին, կրկուն ձէն ածի, որ սա ձէն է ածում: Ես պէտք է էս կկին սպանեմ, սա ինչ կկու է...

Ասում է ու հրացանը քաշում գէպի ծառը:
Տէրը գոռալով ընկնում է առաջը:

— Վա՛յ, չըզարկես, Աստծու սիրուն... սև լինի քո պա-
տահելու օրը, էս ինչ փորձանք էր, որ ես ընկայ մէջը...

Հը՛, չըլինի՞ թէ բարկանում ես...
— Հա՛, ախպէր, հերիք է, արի՛ ինչ տուգանք տալու եմ տամ, քեզանից ազատեմ: Իմ դրած պայմանն է՛ ես էլ պէտք է տուժեմ: Հիմի նոր եմ հասկանում էն հին խօսքը՝ թէ «մարդ ինչ անի, իրան կանի»:

Էսպէս հարուստը խելօքանում է, իսկ փոքր ախպէրը մեծ ախպօր տւած մուրհակը պատում է, հազար մա-
նէթ տուգանքն էլ առնում է ու վերադառնում տուն:



Յ Ա Ն Կ

*1 Գիւղի գրագէտը	3	30 Մոյլ տղան Աթ .Ս: «Հասկեր»
2 Երկու եղբայր, թարգ.	4	*31 Ժրաջան տղայ, ձեռագիր (ակ մասնիկ)
*3 Նոր տարւայ Նէքը— ձեռագիր (կետադրութիւն. միա-վանկ և բազմավանկ բա-սեր), Հ. Հայրապետեան	32	32 Թագաւորն ու բազէն. թարգ.
4 Նոր դպրոց «Հասկեր»	5	*33 Աշնան տերեւը Պ. Մոնոնոեան
5 Շարագրական պատկեր «Իէպի դպրոց»	6	34 Քամի, փոխադրութիւն
*6 Մեր բակի տաւօտը. Հ. Հայրապետեան	7	*35 Ուռենի— ձեռ. Աթ, Խնկոյեան
7 Նազու տատիկը, փոխադր.	7	36 Սուր ախոնջը «Հասկեր» թ. Բալոնց Մարգար
*8 Չարդ տանեմ, Յ. Յակոբեան	8	*37 Տղան և թռչնիկը
9 Բարեկամներ, փոխադր.	8	38 Անձուէր շունը. Չ. Տ. Գ.
*10 Վեր կայ— ձեռագիր (գլխա-տառ և ից մասնիկ) Գ. Մե-լոյեան	9	*39 Մուկը թակարդում. Ա. Ստամբուլցեան
11 Շարագրական պատկեր — «Իսասարանում»	10	40 Սկիւռը, «Հասկեր» Աթ. Խնկ.
12 Խելօքն ու յիմարը «Հասկեր».	10	*41 Մեր ձմեռը, Ջալալխեցի
13 Մոռացայ «Հասկեր» փոփոխ	11	42 Շարագրական պատկեր, «Չնէ մարդ»
14 Սուրիկը— ձեռագիր (յտուղ սնունդ գլխատառով)	11	43 Պառաւի հաւը— ձեռ. (միա-վանկ և բազմավանկ բաւեր)
*15 Մայրիկը, Հ. Հայրապետեան	12	44 Քարը, փոխադր.
16 Շունն ու կատուն. «Հասկեր»	12	*45 Պատի ժամացոյց, Դ. Դե-միրճեան
*17 Կատու, ժողովրդ.	13	46 Շողիկը և պէծիկը, Դ. Դե-միրճեան
18 Որսորդն ու կաքաւը, «Ադ-րիւր»	14	*47 Տօնածառ. Յար. Թումանեան
*19 Կաքաւի երգը, Յովն, Թու-մանեան, ձեռագիր (առու-գանութիւն և իկ մասնիկ)	15	48 Շարագրական պատկեր «Տօնածառ»
20 Վայրի. այժ. Տիկ Բիրեղ	15	49 Բազդաւոր մարդը, փոխադր.
*21 Մաստանը, Աթ, Խնկոյեան	16	*50 Կոյր Աշուղը ձեռագիր, (ոյ-ի 51 գործածութիւնը)
22 Թռչունների չուն, փոխադր.	16	Արևի հրամանները, փոխադր.
23 Աշուն. Հ. Հայրապետեան	17	52 Գարունն եկաւ, Պ. Մոնոնոեան
24 Երկու ձտիւղ. Ղ. Աղայեան	17	*53 Երկրագործի աշխատանքը փոխադր.
ձեռագ. փոփոխ. (ը-ի գործ.)	18	*54 Գարուն. Հ. Հայրապետեան
*25 Պուտուկը, Աթ, Խնկոյեան	18	55 Առաջին ձնձադիկները
26 Լորն ու ձագուկները, թարգ.	19	*56 Ղարիպ մշցուն, Շ. Կուրդինեան
*27 Լորն ու թռչնորսը, Աթ, Խնկ.	19	57 Շերիփուկներ թարգ.
28 Կապիկներ, փոխադրութիւն.	20	*58 Սագեր— ձեռագիր (եր-եղակի և յոյնակի վերջաւոր.)
*29 Կապիկն ու ախոցները Աթ. Խնկոյեան	21	59 Երկրագործ. Կ. Մ. Շարնազարեան

« Ազգային գրադարան »



NL0247581

1. ԿԱՅԾԵՐ Ա.	տարի պատկերագարդ	25 կո
2. ԿԱՅԾԵՐ Բ.	»	40
3. ԿԱՅԾԵՐ Գ.	»	50
4. ԿԱՅԾԵՐ Դ.	»	70
5. ԿԱՅԾԵՐ Ե.	»	80

Պատրաստում է «ԿԱՅԾԵՐ»-ի 2. տարին

Վաճառում է Կովկասի բոլոր յայտնի գրավաճառանոցներում և Ալեքսանդրապոլում՝ կաղմողների մոտ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԳՆՈՂՆԵՐԻՆ ԱՆՈՒՄ Է ԶՐԱԼԻ ԶՆՆՔ

Մեր հասցեն՝ Александрополь, учителю Геворку Микаелянъ
Больш. Слобод. № 42